

ԳԷՈՐԳ ՍԱՐԿԱՒԱԳ ԳԷՈՐԳԵԱՆ



**ԸՆԴԴԷՄ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ԳԱՅԹԱԿՂԻՈՒՄ ԵՆ
ԱՄԲԱՐԻՇՏՆԵՐԻ ԲԱՐԵԿԵՑՈՒԹԵԱՆ ԵՒ
ԶԱՅՐԱՆՈՒՄ ԱՐԴԱՐՆԵՐԻ ԴԺԲԱԽՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**

ԵՐԵՒԱՆ - 2021

Ի յիշատակ հոգեւոյս Տէր Կիւրեղ Քհնյ. Տալեանի



**ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՑ
ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՅԻ**

Օտար աղբիւրներից մէջբերումներ անելիս դրանք գրքում ներկայացրել են հայերէն թարգմանութեամբ:

Գէորգ սրկ. Գէորգեան

«Ընդդէմ նրանց, ովքեր գայթակղում են ամբարիշտների բարեկեցութեան եւ զայրանում արդարների դժբախտութեան համար»:

Հեղինակային իրաւունք © 2021 Գէորգ սրկ. Գէորգեան
Բոլոր իրաւունքները պաշտպանուած են:

ISBN: 1-68564-001-9

ISBN13: 978-1-68564-001-9

Տպագրուած է «Մեկնարկ» ՍՊԸ-ի տպարանում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՍՐՏԻ ԽՕՍՔ / 7

**Ինքձո՞ր ե՞ն ԱՐԴԱՐՆԵՐԸ ՅԱՃԱԽ ԸՆԿՆՈՒՄ ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ
ՄԷՋ ԿԱՄ ՎԱՂԱԺԱՄ ՄԵՌՆՈՒՄ, ԻՍԿ ԱՄԲԱՐԻՇՏՆԵՐԸ
ՎԱՅԵԼՈՒՄ ԵՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹԻՒՆ ՈՒ ՀԱՆԳՍՏՈՒԹԻՒՆ / 9**

ԵՐԱՆԵԼԻ ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՕՍՔԸ / 57
(Թարգմանությունը՝ Գէորգ սրկ. Գէորգեանի)

ՄՐՏԻ ԽՕՍՔ

Բարեշնորհ Գեորգ սրկ. Գեորգեանի սոյն աշխատասիրութիւնը արդարեւ իր մէջ կը խտացնէ Աստուածաշունչ Մատեանի եւ մեր ս. Եկեղեցւոյ Զայրերու շունչն ու իմաստութիւնը: Ներկայացուած խորհրդածութիւնները որոշապէս պատասխաններ կը յղեն մտահոգ հաւատացեալներուն, ովքեր մութի մէջ են եւ կ'որոնեն իրենց միտքը չարչրկող բազում հարցերու պատասխաններ: Զեղինակը իր աշխատութեամբ ընթերցողին միտքն ու հոգին կը լուսաւորէ Աստուծոյ խօսքով եւ նոյն խօսքին ներշնչումով հաւատքի կեանքը վկայախօսած մեր ս. Եկեղեցւոյ Զայրերի պատգամներով ու յաճախ գեղեցիկ եւ հոգեւոր իմաստով հիւթել պատմուածքներով:

Մեր գնահատութեան ու քաջալերանքի խօսքը բարեշնորհ Գեորգ սարկաւագին, որուն գրչէն են ծնած շարք մը հոգեշունչ այլ հատորներ: Միաժամանակ մեր հրաւերը կ'ուղղենք բոլոր անոնց, ովքեր կ'ուզեն իրենց հոգեւոր կեանքին ծարաւը յագեցնել օգտաշատ քրիստոսաւանդ Աւետարանի պատգամներով:

Օրհնութեամբ՝



Յովսէան Արք. Տէրտէրեան
Առաջնորդ Զիւսիսային Ամերիկայի
Արեւմտեան Թեմի

ԻՆՉՈՒԻ ԵՆ ԱՐԴԱՐՆԵՐԸ ՅԱՃԱԽ ԸՆԿՆՈՒՄ
ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ ՄԷՋ ԿԱՄ ՎԱՂԱԺԱՄ ՄԵՌՆՈՒՄ,
ԻՍԿ ԱՄԲԱՐԻՇՏՆԵՐԸ ՎԱՅԵԼՈՒՄ ԵՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹԻՒՆ
ՈՒ ՀԱՆԳՍՏՈՒԹԻՒՆ

Այս հարցը չատերին է հետաքրքրում գրեթէ բոլոր ժամանակներում: Սակայն հարցին պէտք մօտենալ հոգեւոր տեսանկիւնից: Աստծու խօսքը մարդկութեան երկրային կեանքը ներկայացնում է որպէս բարիք: Այս իմաստով երկարակեցութիւնը հասկացւում է որպէս Աստծու պարգեւ. «Երդումեմ ձեզ երկնքում ու երկրում, որ ձեր առջեւ եմ դնում կեանքն ու մահը, օրհնութիւններն ու անլծքները: Ընդդիմ կեանքը, որպէսզի ապրէք դու եւ քո սերունդը: Պէտք է սիրես քո Տէր Աստծուն, լսես նրա տառը, կապուած մնաս Նրան, որովհետեւ Նա՛ է քո կեանքն ու քո երկարակեցութիւնը» (Բ Յովհ. 30, 19-20): Բայց Աստուածաշնչի մէջ կեանքի տեւողութիւնը յարաբերական բարիք է: Կեանքն արժէք ունի միայն ա՛յն ժամանակ, երբ մարդ երկրի վրայ ապրելու ընթացքում ընտրում է կեանքը, այսինքն՝ հետեւելով Աստծու կամքին՝ կատարում է Նրա պատուիրանները՝ իր երկրային կեանքը դարձնելով շնորհաբեր, այն ուղղելով դէպի փրկարար աշխատութիւն եւ աստիճանաբար իրեն պատրաստելով յաւիտենական կեանքին: Եթէ մարդ հոգեպէս աճել է երկնային արքայութեան արժանանալու համար, նա այլեւս բոլորն ցանկութեամբ չի հետամտում իր կեանքի երկարակեցութեանը, այլ հակառակը՝ ուզում է միանալ Տիրոջը, որովհետեւ այս մարմնի մէջ մնալով՝ նա նման կը լինի թափառական պանդուխտի: Մեր տունն ու Հայրենիքն այս երկրի վրայ չեն, այլ՝ երկնքում, որտեղից մեր Տէրն է: Հետեւաբար, քրիստոնեայի համար առաւել եւս հաճելի պիտի լինի դուրս գալ այս մարմնից

ու գնալ Աստծու մօտ, ինչպէս Պօղոս առաքեալն է ասում. «Արդ, ամէն ժամ քաջութիւն ունենք եւ գիտենք, որ ինչքան երկար մնանք այս մարմնի մէջ, օրապահում ենք Տիրոջից (որովհետեւ հաւատով ենք ընթանում եւ ոչ թէ երեւոյթների վրայ հիմնուած): Եւ վստահութիւն ունենք ու առաւել եւս հաճելի է մեզ դուրս գալ այս մարմնից եւ մտնել Կարծու մօտ: Ուստի հոգ ենք պահում, որ, մնանք թէ դուրս գանք, հաճելի լինենք միայն Նրան. քանզի մենք բոլորս Քրիստոսի սրբանի առաջ պիտի ներկայանանք, որպէսզի խրաքանձիւրն սրանայ, ինչ որ արել է աւելի առաջ իր մարմնով՝ թէ՛ բարի եւ թէ՛ չար» (Բ Կորնթ. 5, 6-10):

Նրանք, ովքեր ապրում են միա՛յն երկրային բարիքների համար, յաճախ գայթակղւում են արդարի մահով՝ չհասկանալով, թէ նրա վախճանը բարիք է իր համար: Կոստանդնուպոլսի շնորհաւատ հայրապետ սբ. Յովհան Ոսկեբերանը մխիթարում է նրանց, ովքեր կասկածում են Աստծու նախախնամութեանը կամ կանխատեսութեանը, երբ տեսնում են ամբարիշտների ու չարագործների երջանկութիւնը եւ բարեպաշտ ու բարի մարդկանց դժբախտութիւնը՝ ասելով. «Սիրելիներ՛ք, ձեզանից ոչ ոք թող չգայթակղուի այն բանի համար, որ ամբարիշտներն ու անբարոյականներն իրենց ներկայ կեանքը հանգստութեան ու բարեկեցութեան մէջ են անցկացնում. որովհետեւ այստեղ՝ երկրի վրայ չէ՛ առաքինութիւնների կամ չարիքների վարձատրութեան վայրը: Բայց եթէ այնպէս լինի, որ ամբարիշտներն այստեղ պատժուեն, իսկ արդարները պարգեւատրուեն, սա ոչ լիակատար չափով է, այլ միայն ապագայ դատաստանի որոշ պատկերացման համար, որպէսզի նրանք, ովքեր չեն հաւատում յարութեանը, գուցէ այսկերպ հասկանան ու հաւատան: Ուրեմն՝ չգայթակղուե՛նք՝ տեսնելով ամբարիշտի երջանկութիւնը. նաեւ շփոթութեան չմատնուենք՝ տեսնելով արդարի չարչարանքները, որովհետեւ ոչ թէ այստեղ, այլ այնտեղ են պսակներն ու պատիժները, թէեւ չկայ արատաւոր մի անձ, որի մէջ չլինի որեւէ առաքինութիւն. ինչպէս նաեւ չկայ առաքինի մարդ, որի մէջ չլինի որեւէ արատ: Հետեւաբար,

եթէ այստեղ ամբարիշտը վայելում է բարեկեցութիւն, այնտեղ ծառայում է իր դժբախտութեանը, քանի որ այստեղ իր որոշ բարերարութիւնների համար իր վարձքը ստանալով՝ այնտեղ ենթարկւում է պատշաճ պատժի: Ահա թէ ինչո՞ւ երկրիս վրայ նա վայելում է իր հանգիստը: Բայց աւելի՛ երջանիկ է նա, ով այստեղ համբերում է պատիժներին, որովհետեւ այստեղ իր մեղքերից մաքրուելով՝ այնտեղ անարատ, մաքուր եւ անմեղ կը լինի»¹:

Այս ճշմարտութիւնը բացատրելով՝ Պօղոս առաքեալը նշում է. «Դրա համար իսկ ձեր մէջ բազում հիւանդներ եւ ցաւագարներ կան, եւ շարերն էլ մեռած են» (Ա. Կորնթ. 11, 30): Նաեւ ասում է. «Մարմնեցէ՛ք աղոյսի մէկին սաղանային՝ նրա մարմնի կորստեան համար, որպէսզի նրա հոգին ապրի մեր Տէր Յիսուս Քրիստոսի օրում» (Ա. Կորնթ. 5, 5): Իսկ Եսայի մարգարէն ասում է. «Թող նրա մեղքերին թողութիւն լինի, քանզի իր մեղքերի համար նա Տիրոջ կողմից կրկնակի հալածուած սրացաւ» (Ես. 40, 2): Եւ դարձեալ. «Տէ՛ր Խնայած մեր, տո՛ւր մեզ խաղաղութիւն, դու, որ ամէն ինչով վարձաւորել ես մեզ» (Ես. 26, 12): Դաւիթ մարգարէն էլ ասում է. «Տե՛ս՝ թշնամիներս որքա՛ն բազմացան եւ անիրաւ արեւութեամբ ինձ արեցին» (Սաղմ. 24, 19): Եւ դարձեալ. «Տե՛ս իմ նուաստացումն ու տառապանքը եւ թողութիւն՝ նրա իմ բոլոր մեղքերին» (Սաղմ. 24, 18): Այս բոլորը ցոյց են տալիս, թէ արդարեւ այստեղ են ստանում իրենց մեղքերի հատուցումը: Իսկ որ չարագործները, վայելելով երկրային երջանկութիւնը, պատժի են ենթարկւում գերեզմանում, երեւում է հարուստի համար ասուած՝ Աբրահամի խօսքի մէջ. «Որդեան, յիշե՛ր, որ դու սրացար քո բարիքները այնպէս, քո կեանքի ընթացքում, իսկ Ղազարոսն էլ՝ չարչարանքները. այժմ սա այսպէս մխիթարում է, իսկ դու այդպէս պապական ես» (Ղուկ. 16, 25): Ո՞ր բարիքների մասին է խօսքը: Ասելով՝ «ստացար», ցոյց է տալիս, թէ երկուսն էլ ստացան պատշաճը. մէկը՝ երջանկութիւն, իսկ միւսը՝ դժբախտութիւն: Յետոյ շարունակում է, որ սա «այսպէս մխիթարում է»,

1 Սբ. Յովհան Ոսկեբերան, «Ճառերի ընտրանի», Ս. Էջմիածին, 2007:

քանի որ, ինչպէս տեսնում ես, մաքրուած է իր մեղքերից, իսկ «դու աղոթեղ պապական ես»¹: Ուրեմն չտխրենք՝ տեսնելով չարագործների բարեկեցութիւնը, իսկ եթէ մենք այստեղ նեղութիւնների մատնուենք, ուրախութեամբ համբերենք՝ խորհելով, թէ դրանք մեզ մաքրում են մեղքերից: Սբ. Յովհան Ոսկեբերանը խրատում է. «Եթէ որեւէ արդար չար բան է անում եւ հիւանդանում է կամ ենթարկւում պատժի, մի՛ չփոթուիր, այլ անդրադարձի՛ր, թէ այս արդարը երբեւէ ինչ-որ փոքրիկ չար գործ է կատարել եւ արժանին ստանում է այստեղ, որպէսզի չպատժուի այնտեղ: Նմանապէս, եթէ տեսնում ես, թէ մեղաւորը յափշտակում է, խաբւում, հազարաւոր չարութիւններ գործում, ու չնայած դրան՝ չարու նակում է երջանիկ ապրել, ճիշտ նոյն կերպ մի՛ չփոթուիր, այլ անդրադարձի՛ր, թէ այս մեղաւորը, հազարաւոր չարութիւններ անելով հանդերձ, մի ժամանակ բարի գործ է կատարել եւ արժանի հատուցում է ստանում այստեղ, որպէսզի վարձատրութիւն չպահանջի այնտեղ: Այսպիսով, երբ դու տեսնես, թէ արդարը պատժւում է, նրան երանելի անուանի՛ր եւ ասա՛ դու քեզ, թէ այս արդարը մի մեղք է գործել, դրա համար հատուցում է ստանում եւ միւս աշխարհ է մեկնում մաքրուած: Եթէ աւելի մեծ պատիժ ստանայ, քան իր գործած մեղքն է, դա բազմապատկում է իր արդարութիւնը: Եւ լսի՛ր, թէ ի՛նչ եմ ասում. Յորեն արդար էր, անարատ, ճշմարիտ, աստուածապաշտ (Յոր 1, 1), ու նրա մարմինը պատժի ենթարկուեց այստեղ, որպէսզի վարձատրուի այնտեղ: «Մի կողմ մի՛ նկարիր իմ դատաստանը ու մի՛ մորամօր, թէ ես քեզ այլ ազդարարութեամբ չեմ յայտնուել, քան այնպէս, որ դու աղոթար երևուս (Յոր 40, 3)»:

Երկրի վրայ հանգստութիւն չփնտռե՛նք, քանի որ Բրիստոսի հետեւորդների համար նախատեսուած են միայն նեղութիւններ ու հալածանքներ. «Եւ բոլոր նրանք, որ ուզում են աստուածապաշտութեամբ ապրել Բրիստոս Յիսուսով, հալածանքների մէջ

1 Հայերէն ուրիշ թարգմանութիւններում գրուած է. «Դու տանջուում ես»:

պիտի լինեն» (Բ ՏԻՄ. 3, 12): Հայր Իգնատիոս Բրեանջանինովն ասում է. «Ոչ մի ազնիւ զինուոր ճակատամարտում իր համար չի պահանջում զովացուցիչ բաղնիքներ ու հարուստ կերուխումների սեղաններ, քանի որ այս բոլորն իրեն ցոյց են տալիս ոչ թէ որպէս զինուոր, այլ որպէս փափկասուն մարդ: Ճշմարիտ զինուորը ջանում է իր բոլոր ուժերը լարել արեւի կիզիչ շոգին՝ ծածկուած փոշիով, առատ քրտինքով, սուգով ու սրտի տխրութեամբ: Մեր ներկայ կեանքը խիզախութեան, սխրագործութիւնների ու պայքարի թատերաբեմ է, երբ մենք զանազան վէրքեր ու խոցեր ենք ստանում, հեղում ենք մեր արիւնը ու համբերում հիւանդութիւններին»: Հետեւաբար, երբէք մեր անձերի համար հանգիստ չփնտռենք: Հանգստի համար ուրիշ ժամանակ է նշանակուած: Պօղոս առաքեալն ասում է. «Արդ, եւ ճիշտ այսպէ՛ս եւ վագում, ոչ թէ աննպարակ. այնպէս չեմ կոփահարում, իրեւ թէ քամի ծեծէի» (Ա Կորնթ. 9, 26): Փրկութեան նեղ ճանապարհից անցնելով՝ երկրային նեղութիւնների միջով՝ մենք պէտք է ամէն ջանք թափենք՝ հասնելու սրբութեան ու կատարելութեան: Թէեւ այժմ անցեալի հալածանքն ու կտտանքները չկան, սակայն գոյութիւն ունեն այլ փորձութիւններ ու վտանգներ, որոնք պատահում են ամէն օր: Պօղոս առաքեալը նաեւ ասում է. «Ձեր վրայ ոչ մի փորձութիւն չի եկել, բացի մարդկանցից եկածից: Բայց հաւատարիմ է Աստուծոյ, որ ձեզ անկի փորձութեան մէջ չի զգելու, քան կարող էք դիմել. այլ՝ փորձութեան հետ փրկութեան ելք էլ է ցոյց տալու, որպէսզի կարողանաք համբերել» (Ա Կորնթ. 10, 13): Հետեւաբար, Աստուծոյ խնդրենք, որ չընկնենք փորձութիւնների մէջ, իսկ եթէ ընկնենք, ապա արիաբար կրենք դրանք: Աստուծոյ երկրային բոլոր նեղութիւններն ամբողջապէս ուղղում է բարի նպատակների: Սրա համար այն բոլոր նեղութիւնները, որոնք մեզ պատահում են այս կեանքում, մեր բարիքի համար են, ուստի դրանք պէտք է ընդունել հաւատով՝ որպէս Աստուծոյ այցելութիւն: Սբ. Եփրեմ Ասորին ասում է. «Ամէն ինչ, որ քեզ պատահում է, ընդունի՛ր որպէս բարիք՝ իմանալով, թէ ոչինչ

չի լինում առանց Աստծու կամքի: Իսկ նենգամիտը փորձում է մարդուն՝ բազում ցաւեր պատճառելով. ու ճնշում է նրան, բայց այն չափով, որքան Աստուած է թոյլատրում նրան»¹:

Եթէ երկրային նեղութիւններն Աստծու այցելութիւնն են, ապա ինչո՞ւ են դրանք մեզ ուղարկւում: Պօղոս առաքեալը պատասխանում է. «Քանի որ Տէրը, ում սիրում է՝ խրատում է, պարծում է ամէն մի որդու, որին ընդունում է: Թէ խրատին համբերող էր, Աստուած ձեզ կը մօտենայ իբրեւ որդիների: Ո՞րն է այն որդին, որին հայրը չի խրատում» (Եբբ. 12, 6-7): Եկեղեցու Հայրերն ասում են, թէ այս փորձութիւններն Աստծու կողմից թոյլատրւում են՝ մեղաւոր մարդուն խրատելու համար: Արդեօ՞ք սա Աստծու արդարադատութեան հատուցումն է նրանց, ովքեր անարգում են Նրան մարդկային անօրէնութիւններով: Սրա մասին երանելի Դաւիթն ասում է. «Լաւ է, որ Դու խոնարհ դարձրիր ինձ, որպէսզի Քո արդարադատութիւնը սովորեմ» (Սաղմ. 118, 71):

«Ինչո՞ւ են այսպիսի փորձանքներ ու հարուածներ գալիս, եւ որո՞նք են դրանց հիմքերը»,~ հարց է տալիս սբ. Գրիգոր Աստուածաբանը եւ պատասխանում. «Որովհետեւ, մոռանալով Աստծու պատուիրանները, գնացին իրենց կեղծաւոր սրտին հետեւելով. որովհետեւ սուրբերի ու Քրիստոսի չարչարանքներին եւ Աւետարանի կոչմանն անարժանաբար էին ապրում»: Սակայն միայն պատժի կամ հատուցման համար չէին այս հարուածները տրւում Աստծու կողմից: Նրանք ունեն նաեւ ուրիշ՝ աւելի կարեւոր նպատակ ու նշանակութիւն՝ մեղաւորի դարձը, կեանքի վերանորոգումը եւ մեր մաքրուելը մեղքերից: Սբ. Բարսեղ Մեծն ասում է. «Աստուած մեզ հասցնում է այս հարուածները, քանի որ մենք հեռացել ենք Իրենից. ոչ թէ պարզապէս մեզ փորձանքի ենթարկելու, այլ մեզ ուղղելու համար»:

Բայց եթէ Աստուած Սէր է, ապա ինչո՞ւ է մարդ ենթարկւում զանազան փորձանքների: Ինչպէ՞ս է հնարաւոր

1 <https://predanie.ru/book/67902-isaak-sirin-tvoreniya> (սոս 19/10/21):

մարդկային տառապանքն ու վիշտը: Ինչպէ՞ս կարող ենք հասկանալ Աստծու պատժի ու արդարադատութեան մասին այն արտայայտութիւնները, որոնք անընդհատ հանդիպում ենք Աստուածաշնչում եւ սբ. Հայրերի գրութիւններում: Սբ. Յովհան Ոսկեբերանը յայտնում է հետեւեալը. «Երբ դու լսում ես Աստծուն վերաբերող «բարկութիւն», «ցասում» կամ «պատիժ» բառերը, ապա դու մի՛ վերագրիր դրանց մարդկային իմաստ: Դրանք քաջալերանքի խօսքեր են: Աստուածութիւնը խորթ է նման բաներին: Այդպէս է ասում, որպէսզի աւելի կոպիտ մարդկանց մօտեցնի տուեալ նիւթի հասկացողութեանը»¹:

Սբ. Իսահակ Ասորին ասում է. «Աստուած ոչինչ չի անում յանուն հատուցման, այլ նայում է միայն օգուտին, որը պէտք է բխի Նրա գործողութիւններից»²: Իսկ սբ. Գրիգոր Նիսացին նշում է. «Անխիղճ արատութիւն է Աստծու բնութեանը վերագրել բարկութիւն կամ ցանկացած որեւէ կիրք: Սա ոչ ոք չի հերքի, նոյնիսկ նրանք, ովքեր քիչ են ուշադիր Աստծու ճշմարտութեան գիտելիքների նկատմամբ»³: Սբ. Կասիան Հռոմէացին էլ Աստծուն բարկութիւն, զայրոյթ կամ ցասում վերագրելը համարում է հայհոյանքին հաւասար մի բան⁴:

Փորձութեան ու տառապանքի բնութագրման մասին կեղծ ընկալումից թւում է, թէ Աստուած բարկութեամբ շտապում է վրէժխնդիր լինել ու պատժել մարդուն իր գործած մեղքերի համար: Բայց ամէն ինչ այլ կերպ է պատահում: Պօղոս առաքեալն ասում է. «Ոչ որ, երբ փորձութեան մէջ լինի, թող չասի՝ «Աստուծոյ եմ փորձուում», քանի որ Աստուծոյ հարկից չի փորձուում, եւ ինքն էլ չի փորձուում ոչ որի: Իրարանջիր որ փորձուում է՝ հրապարակով եւ խարուե-

1 Иоанн Златоуст, свт. Творения. Т. 5. Кн. 1. СПб., 1899, С. 49.

2 Исаак Сирин, прп. О божественных тайнах и о духовной жизни. Беседа 39. §5. СПб., 2006, С. 272.

3 Григорий Нисский, свт. Творения. Т. 6. М., 1864, С. 428–429.

4 Նմմր. Кассиан Римлянин, прп. Обозрение духовной брани. §85 // Добротолюбие. Т. 2. Свято-Троицкая Сергиева Лавра, 1993, С. 55.

լով իր ցանկութիւններից» (Յակ. 1, 12-17): Աստծու ստեղծած աշխարհը տնօրինուած ու դասաւորուած է բնական եւ օրինաւոր ճանապարհով: Ֆիզիկական եւ հոգեւոր օրէնքների ցանկացած խախտում, բնականաբար, ցաւ ու տառապանք է առաջացնում: Սուրբ վարդապետներն ուսուցանում են, որ մեղքը պարզապէս վէրք է, որով մարդ պատժում է ինքն իրեն՝ ենթարկուելով այն ֆիզիկական եւ հոգեւոր օրէնքների ազդեցութեան տակ, որոնցով ստեղծուել են աշխարհը եւ հէնց ինքը՝ մարդը: Սբ. Մարկոս ճգնաւորը բացատրում է, թէ ինչպէս է դա պատահում՝ ասելով. «Տէրը որոշեց, որ իւրաքանչիւր գործի համար՝ լաւ թէ չար, բնականաբար պէտք է հետեւի պատշաճ հատուցումը, ոչ թէ ըստ (Աստծու կողմից) յատուկ նպատակի, ինչպէս կարծում են ոմանք, ովքեր չունեն հոգեւոր օրէնքը... Ուստի, եթէ վիշտ չես ուզում, մի՛ մեղանչիր»¹:

Հասկանալի է, թէ Աստուած չէ՛ պատճառն ընտանեկան վէճերի, սոցիալական եւ միջպետական բախումների: Աստուած չէ՛, որ լեարդի քաղցկեղ է ուղարկում հարբեցողին, իսկ եսակենտրոն ու հպարտ մարդուն՝ ընտանեկան դժբախտութիւններ: Բոլոր անախորժութիւնների հիմնական աղբիւրը հպարտութիւնն է, որն իր հերթին բերում է ցանկասիրութեան, արծաթասիրութեան ու փառքի ծարաւի: Այս երեք հիմնական կրքերն անհամար աղէտներ են բերում մարդկութեանը:

Յովհաննէս Աստուածաբան առաքեալն ասում է. «Եթէ մէկը սիրում է աշխարհը, Տօր սէրը նրա մէջ չէ, քանի որ այն ամէնը, ինչ աշխարհի մէջ կայ, մարմնի ցանկութիւն է, աչքերի ցանկութիւն եւ ա՛յս կեանքի ամբարշտանութիւն, որ Տօրից չէ, այլ՝ այս աշխարհից» (Ա Յովհ. 2, 16): Սրանք, տիրանալով մարդուն, խոշտանգում ու տանջում են նրան, խաթարում նրա ֆիզիկական եւ հոգեկան առողջութիւնը, անձնական ու սոցիալական կեանքը՝ դարձնելով

1 Марк Подвижник, прп. Нравственно-подвижнические слова. Слово 5. М., 1858. С. 190.

նրան խաւար ուժերի խամաճիկ: Բայց Տէրը շարունակում է սիրել մեղաւորին եւ ոչ միայն մարդուն փրկում է մեղքերի ծանր հետեւանքներից, այսինքն՝ վշտերից, հիւանդութիւններից, դժբախտութիւններից, մահուանից եւ այլն, այլ մինչեւ անգամ չի զրկում նրան երկրային բազում օրհնութիւններից: Հետեւաբար, մարդկային տառապանքի ընդհանուր եւ հիմնական պատճառը՝ խղճի դէմ ուղղուած բարոյական եւ հոգեւոր այն գործողութիւններն են, այսինքն՝ կրքերը կամ մեղքերը (գործով, խօսքով, մտքով), որոնք հակասում են Աստծու կողմից հաստատուած ֆիզիկական եւ հոգեւոր օրէնքներին: Հետեւաբար, առաջացած տառապանքներն ու վշտերը ո՛չ թէ Աստծու վրէժխնդրութեան եւ արդարադատութեան հատուցումներն են մարդու հանդէպ իր կատարած մեղքերի համար, այլ Նրա անպատում սիրոյ գործողութիւններն են:

Բայց ինչպէ՞ս կարող են երկրային նեղութիւնները բարոյապէս մաքրել եւ ուղղել մարդուն: Եկեղեցու վարդապետներն ասում են, թէ երկրային նեղութիւնները կրելով՝ մարդը զրկւում է երկրային բարիքներից (յատկապէս բարեկեցութիւնից) ու փրկւում զանազան կրքերի եւ արատների ազդեցութիւնից: Սբ. Յովհան Ոսկեբերանն ասում է. «Աստծու պատիժը նոյնն է, ինչ բժշկի սպեղանին՝ կտրելն ու կրակը: Ինչպէս կրակի հպումով այրւում է վէրքը, ու դադարում նրա զարգացումը. եւ ինչպէս երկաթը չէզոքացնում է փտութիւնը (իհարկէ, ցաւ պատճառելով), բայց օգուտ բերում, այդպէս էլ քաղցը, աղէտներն ու բոլոր փորձանքները տրւում են երկաթի ու կրակի փոխարէն, որպէսզի (ինչպէս որ մարմնի դէպքում է) կանգնեցնեն հիւանդութիւնների տարածումը»: Բացի սրանից՝ երբ քրիստոնեան փորձանքների մէջ տեսնում է Աստծու պատիժը, բնականաբար վախենում է, որ աւելի՛ մեծ պատժի չենթարկուի: Եւ սա կարող է ծառայել՝ բաւականաչափ ուղղելու իր կեանքի սխալ ընթացքը: Սբ. Յովհան Ոսկեբերանը շարունակում է. «Ինչպէս որ մշտապէս զինուած

զինուորի տունը չի համարձակուում մտնել ո՛չ գող, ո՛չ աւազակ, ո՛չ էլ ուրիշ չարագործ, այդպէս էլ, երբ մեր մէջ կայ Աստծու երկիւղը, ո՛չ մի ախտ չի կարող հեշտութեամբ մտնել մեր մէջ. եւ ախտերը հեռանում են ու փախչում՝ հալածուելով վախից: Եւ ոչ միայն մէկ, այլ ուրիշ՝ աւելի մեծ օգուտ կայ վախից: Այն ոչ միայն հալածում է ախտերն ու չարիքները, այլեւ մեծ բարեպատեհութեամբ մեր մէջ ներմուծում է բարեգործութիւն»:

Մարդը, անցնելով զանազան փորձանքների միջով, փորձով հասկանում է, թէ բոլոր երկրային բարիքները ժամանակաւոր են ու անցողիկ, ինչպէս ասում է Սողոմոն Իմաստունը. «Ամէն բան ունայնութիւն է եւ հոգու տանջանք» (Ժող. 1, 14): Եւ այս պատճառով մեր սրտում յայտնւում է ձգտումը դէպի երկնայինը, յաւիտենական եւ անթառամ բարիքները: Սրա համար Աստուած մեզ դժուար ու ծանր կեանքի մէջ է տեղաւորում, որպէսզի մենք, այստեղի վշտերից ազդուելով, ապագայ բարիքներին փափագենք:

Փորձանքների մէջ են ընկնում ո՛չ միայն մեղաւորները, այլ նաեւ արդար եւ առաքիլնի մարդիկ: Ի՞նչ նշանակութիւն ունեն փորձանքներն այս դէպքում: Սուրբ վարդապետներն ասում են, թէ այս դէպքերում փորձանքների նպատակը առաքիլութեան փորձառութիւնն է եւ քրիստոնեայի բարոյական արժանապատուութեան բարձրացումը ու յետագայ կատարելագործումը: Սբ. Բարսեղ Մեծը գրում է. «Յաճախ անձի փորձութեան համար մարդիկ նման փորձանքների մէջ են ընկնում, որպէսզի դժուար պարագաներում յայտնի լինեն արժանաւորները»: Քանի որ չկայ այնպիսի մարդ, որ մեղք չգործի, ուստի արդարը չի կարող մեղքից զերծ լինել: Իսկ նեղութիւններին համբերելով՝ քրիստոնեան մաքրւում է իր մեղքերից ու բարոյապէս բարձրանում. «Քանի որ Քրիստոս մարմնով չարչարուեց մեզ համար, դուք եւս զինուեցէ՛ք նոյն մարտով. որովհետեւ, ով մարմնով չարչարուեց է, դադարուեց է մեղանչելուց» (Ա. Պետր. 4, 1): Սբ. Յովհան Ոսկեբերանն ասում է. «Ինչպէս որ փայլում է ոսկին, երբ նետւում է կրակի մէջ, այդպէս

էլ արդարը, փորձութեան մէջ ընկնելով, աւելի է փայլում, ինչպէս ոսկին՝ կրակից փորձուելով»:

Յաճախ բարի մարդիկ կեանքի ընթացքում ենթարկւում են ծանր տանջանքների ու մերձենում մահուան, որպէսզի մաքրուեն մեծ կամ փոքր մեղքերից, որովհետեւ չկայ մի արդար, որ մեղք չգործի, եւ չկայ չար մարդ, որ չունենայ որեւէ բարեմասնութիւն, որի համար էլ նա արժանանում է հանգստի: Բայց այստեղ ստանալով ամէն տեսակ պարգեւներ՝ հանդերձեալ կեանքում է՛լ աւելի մեծ խստութեամբ դատապարտւում է իր գործած չարիքների համար: Ուրեմն՝ ինչպէ՞ս Աստծու արդարադատութեան հետ համաձայնեցնել այն իրողութիւնը, թէ շատ յաճախ արդարները չարչարւում են երկրիս վրայ ու մեռնում, իսկ ամբարիշտները վայելում են բարեկեցութիւն: Եկեղեցու նախնի վարդապետները պատասխանում են այս հարցին: Նախ, Աստծու արդարադատութիւնը մարդկանց հանդէպ չի սահմանափակւում իրենց ներկայ կեանքով, որն իրենց համար առաքինի կենցաղավարութեան ու սխրագործութիւնների վայր է եւ յաւիտենականութեանը պատրաստութեան ժամանակ: Մի այլ կեանք էլ կայ, երբ Աստծու ճշմարտութիւնն ու արդարադատութիւնը բոլորին հատուցում են՝ համաձայն իրենց արժանիքների: Երկրորդ, Աստուած մերթ արդարութեամբ այստեղ պատժում է արդարներին, քանի որ երկրի վրայ չկայ որեւէ արդար, որ մեղք գործած չլինի: Աստուած նաեւ վարձատրում է ամբարիշտներին արդարութեամբ, քանի որ կան ամբարիշտներ, որոնք ունեն ոչ պակաս արժանիք: Երրորդ, արդարներին պատժում է բարի նպատակով, որպէսզի նեղութիւնների միջոցով նրանց մաքրի մեղսալից ախտերից եւ է՛լ աւելի հաստատի բարեպաշտութեան մէջ, նաեւ որպէսզի այստեղի ժամանակաւոր պատժի շնորհիւ այլեւս չդատապարտուեն յաւիտեան: Նաեւ մեղաւորներին խնայում է բարի նպատակով, որպէսզի նրանց ստիպի՝ զգալու իր հայրական անսահման սէրն ու բարերարութիւնը եւ տայ ժամանակ ապաշխարութեան համար:

Կամ էլ նրանց այստեղ վարձատրում է որեւէ բարեգործութեան համար, որպէսզի այնտեղ հատուցի իրենց չարիքների համար: Չորրորդ, ճշմարիտ է նաեւ այն, որ այստեղ էլ չարագործները պատժւում են, իսկ բարեպաշտ մարդիկ վարձատրութիւն են ստանում եւ իրենց փորձութեան ժամին օգտւում են այլ թանկարժէք բարիքներից՝ հոգեւոր աշխարհով, հոգու զուարթութեամբ եւ Աստծու մխիթարութեամբ: Իսկ չարագործները միշտ տանջւում են իրենց կրքոտ ու մեղսալի ցանկութիւններով եւ անօրինութիւններով, որոնք ունենում են կորստաբեր ներգործութիւն ու կործանարար ազդեցութիւն իրենց հոգու ու մարմնի համար:

Իսկ ինչպէ՞ս վերաբերուել այն վտանգներին ու փորձանքներին, որոնք մեզ վրայ են գալիս կարծես առանց որեւէ գործուած մեղքի պատճառով: Սրբազան Աւանդութիւնը պատմում է, թէ Հայր Սիմէօն անունով մի սուրբ կար, ով բարեպաշտ սարկաւազ մի ընկեր ունէր՝ Յովհաննէս անունով: Իրեն պատահեց այսպիսի մի փորձանք: Այնտեղ, ուր ապրում էր Յովհաննէսը, չարագործները գիշերով սպանում են մի մարդու ու մեռածի դիակը դնում են սարկաւազի տան դռան առաջ ու փախչում, որպէսզի չեղեն իրենց գործած ոճիրի կասկածները: Առաւօտեան ժողովուրդը տեսնում է սպանուածին, ու քաղաքում լուր է տարածւում, թէ սարկաւազն է մարդասպանը: Այս լուրը հասնում է քաղաքի մեծամեծերին, որոնք էլ բանտարկում են սարկաւազին: Վերջինս որեւէ կերպ չի կարողանում փաստել իր անմեղութիւնը ու դատապարտւում է ամօթալի եւ խայտառակ մահապատժի՝ կախաղանի: Մեղադրեալին տանում են մահապատժի վայրը: Այն ժամանակ բնակիչներից մէկն շտապում է երանելի Սիմէօնի մօտ եւ ասում. «Տե՛ս, թէ ինչպէ՛ս քո ընկերն ու բարերարը՝ Յովհաննէս սարկաւազը, մահուան դատապարտուեց: Չէ՞ որ ոչ ոք իր նման չէր հոգում ու խնամում քեզ, իսկ եթէ նրան մեռցնեն, դու սովից կը մեռնես»: Յետոյ պատմում է դատապարտութեան պատճառի մասին: Սբ. Սիմէօնն անմիջապէս առանձնանում է ու

գնում այնտեղ, ուր սովորաբար աղօթում էր: Նա սկսում է փութաջան աղաչել Աստծուն, որ փրկի ընկերոջն այս մահաբեր փորձանքից: Աստուած լսում է սուրբի ջերմեռանդ աղօթքը. յայտնաբերում են իսկական մարդասպանները, եւ Յովհաննէսը ներում է ստանում մահապատժից մի քանի ըոպէ առաջ: Նա շտապում է սուրբի մօտ եւ նրան գտնում է աղօթքով տարուած: Վերջացնելով իր աղօթքը՝ Հայր Սիմէօնը դիմում է սարկաւազին. «Յովհաննէ՛ս, եղբա՛յրս, աղօթիր ու փառաբանիր մեր Տիրոջն ու Փրկչին, բայց մինչ այդ լսի՛ր, թէ ի՛նչ եմ ասում քեզ. դու մտածում ես, թէ զուր տեղը տուժեցիր: Ո՛չ, իմացի՛ր, թէ զուր տեղը չէր: Այս փորձանքը քեզ եկաւ, քանի որ, յիշո՞ւմ ես, երբ քեզ մօտ երկու աղքատ էին եկել, դու քո ունեցուածքից մի բան տուեցի՞ր նրանց: Ո՛չ, հրաժարուեցիր նրանցից եւ նրանց ձեռնուռայն արձակեցիր: Այդ պատճառով ընկար փորձանքի մէջ»: Սա մեզ սովորեցնում է, թէ մենք առանց դժգոհութեան, այլ հեղութեամբ համբերենք բոլոր պատուհասներին ու փորձանքներին: Չասե՛նք, թէ «ինչո՞ւ եմ տանջւում, երբ ես մեղաւոր չեմ»: Մարդկանցից կարելի է թաքնուել, բայց ո՛չ Աստծուց: Տէրը տեսնում է ոչ միայն մեր գործերը, այլեւ գիտէ մեր սրտի բոլոր ծածուկ խորհուրդները:

Սուրբ Հայրերը նաեւ խրատում են, թէ Աստծու թոյլատրած՝ մեր արդի կեանքի պատիժներն ու տառապանքները կարող են բաւական թեթեւացնել ապագայի մեր տանջանքները: Սուրբ Գիրքն էլ է այս մասին վկայում: Պօղոս առաքեալը, դիմելով կորնթացիներին, իրենց մէջ գտնուող մի անբարոյականի համար, ասում էր, թէ աւելի լաւ է, որ սրա մարմինը կորչի, որպէսզի հոգին փրկուի Տէր Յիսուսի օրը (տե՛ս Ա Կորնթ. 5, 5): Տեսնո՞ւմ ես ողորմած Աստծու անպատմելի մարդասիրութիւնը. տեսնո՞ւմ ես, թէ ինչպէ՞ս Աստուած օգտագործում է ամէն առիթ, որպէսզի մենք, մեղանչելով հանդերձ արդար եւ մեզ հասանելիք պատժին արժանանալով, աւելի թեթեւ պատիժ կրենք:

Աբբա Դորոթէոսն ասում է. «Ամէն շփոթութեան հիմնական

պատճառը, եթէ մանրակրկիտ ուսումնասիրենք, այն է, որ մենք չենք նախատում ինքներս մեզ: Մեր բոլոր հիասթափութիւնները բխում են սրանից: Այս պատճառով մենք երբէք չենք կարող խաղաղ վիճակ ունենալ: Զարմանալու ոչինչ չկայ, երբ բոլոր սուրբերից լսում ենք, թէ այլ ճանապարհ չկայ, քան ինքնահաստատման այդ ճանապարհը: Բայց մենք, նոյնիսկ տեսնելով, թէ սուրբերից ոչ մէկը ուրիշ ճանապարհ բռնելով հանգստութիւն չգտաւ, յոյս ունենք խաղաղութիւն ձեռք բերել կամ գնալ ուղիղ ճանապարհով՝ երբէք չցանկանալով ինքներս մեզ նախատել: Իրօք, եթէ մարդ կատարի հազարաւոր առաքինութիւններ եւ հաւատարմօրէն չպահի այս ճանապարհը, նա երբէք չի դադարի վիրաւորուել եւ վիրաւորել ուրիշներին՝ դրանով իսկ փչացնելով իր բոլոր աշխատանքները: Ընդհակառակը, ինչպիսի՝ ուրախութիւն, ինչ՝ հանգստութիւն է զգում նա, ով իր անձն է նախատում: Նա, ով իր անձն է նախատում, ուր էլ որ գնայ, ինչպէս Աբբա Պիմէնն ասաց, անկախ նրանից, թէ ի՛նչ է պատահում իր անձը նախատողի հետ, լինի կորուստ, անպատուութիւն կամ որեւէ վիշտ, նա ինքն իրեն արդէն ամէն վշտի արժանի է համարում եւ երբէք չի ամաչում: Ուրիշ ինչպիսի՞ տրամադրութիւն ունեցողը կարող է ազատ լինել տխրութիւնից»¹:

Աբ. Բարսեղ Մեծը խրատում է. «Պատահաբար չէ, երբ Աստծու թոյլտուութեամբ Իր ծառաները պէս-պէս փորձութիւնների ու վտանգների մէջ են ընկնում, որպէսզի փորձառութեամբ ճանաչեն իրենց Ստեղծողի ճշմարիտ սէրը: Ինչպէս խիզախ մարտիկների սխրագործութեան ջանասիրութիւնը պսակների է առաջնորդում, այդպէս էլ քրիստոնեաների փորձութիւնները մղում են կատարելութեան, եթէ Աստծու կարգադրութիւնները համբերութեամբ եւ ամենայն գոհունակութեամբ ընդունեն»²:

1 <http://montolga.ru/saintignatij/legacy/monkhood/041> (սւն 19/10/21):

2 https://azbyka.ru/otechnik/Vasilij_Velikij/simfonija-po-tvorenijam-svjatitelja-vasilija-velikogo/300 (սւն 19/10/21):

Հիւանդութիւններն ու տառապանքները մեզ մաքրում են արատներից եւ անօրինութիւններից: Երբ ջերմութիւնից տառապող մէկը խնդրեց Աբբա Յովհաննէսին, որ իր աղօթքներով բժշկի իրեն, սուրբը պատասխանեց. «Դու ուզում ես ազատուել այն բանից, որ քեզ այժմ անհրաժեշտ է. որովհետեւ ինչպէս մարմինն է մաքրւում օծանելիքով, այդպէս էլ հոգին է մաքրւում հիւանդութիւնների ու տառապանքների միջոցով»: Պօղոս առաքեալն էլ իր մարմինը ճնշում էր ու տանջում, որպէսզի ինքը խոտելի չգտնուի (տե՛ս Ա Կորնթ. 9, 27):

Անապատական Հայրերից մէկն իր աշակերտին ասում էր. «Որդեա՛կ իմ, չտրտմես, երբ դու հիւանդ ես եւ անասելի տառապանքներ կրում: Աստծուն փառք տո՛ւր ու շնորհակալ եղի՛ր, որովհետեւ հոգին երկաթի նման է. տառապանքի ու վշտերի կրակի մէջ մաքրւում է ժանգից, իսկ եթէ նա ոսկու նման է, բոցի մէջ մաքրւում է բոլոր առկայ բծերից ու կատարելապէս մաքուր եւ անբասիր յայտնւում է Աստծու առաջ: Ուստի համբերութեամբ կրելով տառապանքդ՝ աղօթի՛ր Աստծուն, որպէսզի Նա քեզ ուժ տայ՝ իր ձեռքից ընդունելու այն ամէնը, ինչ որ քեզ է տալիս»:

Սուրբ վարդապետները խրատում են, թէ որեւէ մէկի հիւանդութեան կամ մահուան պատճառով չի կարելի դատել այդ մարդու մեղաւորութեան աստիճանի կամ էլ բարեպաշտութեան մասին, որպէսզի ինքներս չդատապարտուենք: Թէպէտ, ըստ սուրբգրային վկայութեան, ամբարիշտի մահը չար է, տանջալի ու դաժան, իսկ արդարինը հանգիստ է ու բարի (տե՛ս Սաղմ. 33, 21), սակայն կան բացառութիւններ: Երբեմն ամբարիշտն էլ մեռնում է «բարի» մահով, իսկ արդարը ենթարկւում է դաժան ու սոսկալի մահուան: Բայց սրանով չի կարելի գալ առաջինի բարեպաշտութեան եւ երկրորդի մեղապարտութեան մասին եզրակացութեան: Մարգարէն ասում է. «Լա՛յ նրանց, որոնք չարք թարի կ'անուանեն և թարին՝ չար» (Ես. 10, 1): Մենք չգիտենք Աստծու դատաստանները, բայց երանելի Դաւթի հետ հաստատում ենք. «Արդար ես դու,

Տէ՛ր, եւ շիրտակ են քո դատաստանները» (Սաղմ. 118, 137):

Սբ. Աթանաս Մեծն ասում է, թէ՛ «Շատ արդարներ մեռնում են չար մահով, իսկ մեղապարտներ մեռնում են բարի մահով, այսինքն՝ Հանգիստ եւ առանց ցաւի»¹: Այս բանը Հաստատելու համար նա պատմում է մի դէպք, որը պատահել էր վանական մի ճգնաւորի հետ, ով յայտնի էր իր հրաշագործութիւններով եւ իր աշակերտի հետ ապրում էր անապատում: Մի անգամ աշակերտը գնում է քաղաք, որտեղ կար չարագործ մի տիրակալ, ով բոլորովին չէր վախենում Աստծուց ու յայտնի էր իր անարդար եւ արատաւոր կեանքով: Եկաւ տեսաւ, թէ ժողովրդի բազմութիւնը մեծ փառքով ու պատուով կատարում է նրա թաղումը: Աշակերտը խորհրդածում է, թէ այս անարժան մարդն ինչո՞ւ արժանացաւ այսպիսի հանգիստ մահուան ու փառաւոր թաղման: Երբ շփոթուած վերադարձաւ անապատ, իր սուրբին տեսաւ ճանապարհի վրայ ընկած ու մի մարդակեր բորենու կողմից պատառ-պատառ եղած: Նա սկսեց դառնօրէն լալ ու ողբալ սուրբի համար եւ Աստծուն աղօթում էր՝ ասելով. «Տէ՛ր, ի՛նչ փառաւոր մեռաւ այդ չար տիրակալը, իսկ Քո սուրբն ինչո՞ւ այսպէս դառն ու դաժան կերպով մեռաւ՝ վայրի գազանի կողմից պատռուելով»: Երբ նա լաց էր լինում ու աղօթում, Տիրոջ հրեշտակը յայտնուեց եւ ասաց նրան. «Քո սուրբի համար ինչո՞ւ ես լաց լինում: Իրօք, այդ տիրակալը չարագործ էր, բայց մի բարի գործ էր արել, որի համար իր վարձատրութիւնն ստացաւ եւ այդպիսի փառաւոր թաղման արժանացաւ, իսկ հանդերձեալ կեանք տեղափոխուելով՝ նրա համար ուրիշ սպասելիք չկայ, բացի ահաւոր դատապարտութիւնից: Իսկ քո ուսուցիչը՝ սուրբ եւ ազնիւ ծերունին, ամէն ինչում հաճելի էր Աստծուն, բայց բարեպաշտութեամբ զարդարուած լինելով հանդերձ՝ նա՛ որպէս մարդ, մի մեղք էր գործել, որ այսպիսի դաժան մահով մաքրուեց, ներուեց եւ այս կեանքից հեռացաւ՝

1 https://azbyka.ru/otechnik/Petr_Ekaterinovskij/nastavlenie-i-uteshenie-v-bolezni-i-predsmertnoe-vremja (սւո 19/10/21):

բոլորովին մաքուր»։ Լսելով հրեշտակի այս պատասխանը՝ սուրբի շփոթահար աշակերտն արդէն ամբողջապէս մխիթարուեց ու շարունակեց իր վանական կեանքը։

Մարդասէր Աստուած մեծագոյն ողորմածութիւն ու բարեհաճութիւն է ցուցաբերում, երբ բարի եւ արդար մարդկանց մահուան միջոցով ազատում է այս աշխարհի չարիքներից, տառապանքներից ու փորձանքներից, յաւիտեան չի թողնում աշխարհի անհանգիստ վիճակում, ինչպէս Եսայի մարգարէն էր ասում. «Տեսէ՛ք՝ թէ ինչպէ՛ս կորաւ արդարը, եւ չկայ մէկը, որ սրբով կարեկցի. արդար մարդիկ վերանում են, եւ ոչ ոք ուշադրութիւն չի դարձնում, որ արդարն անիրաւութեան պատճառով է վերանում։ Թող խաղաղ լինի նրա գերեզմանը, ով վերացաւ մէջրեկից» (Ես. 57, 1-2)։

Սբ. Յովհան Ոսկեբերան հայրապետն իր «Մահուան մասին» ճառում ասում է. «Ո՞վ է այդ դժբախտ ու խղճուկ մարդը, որ նախընտրում է արդար մահը, երբ կարելի է մեռնել անարդար մահով։ Եթէ հարկ է վախենալ մահից, ապա նրանից, որ մենք արժանապէս կ'ունենանք, քանի որ անարդար մահ ունեցողը սրա շնորհիւ հաղորդակցւում է բոլոր սուրբերի հետ։ Նրանց մեծամասնութիւնը հաճոյ է եղել Աստծուն եւ այդպիսի անարդար վախճան ունեցել, որոնցից առաջինն Աբելն էր։ Նա Կայէնի հանդէպ մեղք չէր գործել, նրան չէր վիրաւորել, բայց սպանւում է այն բանի համար, որ մեծարում է Աստծուն։ Իսկ Աստուած դա թոյլատրում է նրան սիրելի՞ւմ, թէ՞ ատելով։ Ակնյայտ է, որ նա թոյլ է տալիս այն պատճառով, որ սիրում եւ ուզում է այդ անարդար սպանութեան համար մեծ պարգևի արժանացնել։ Այստեղից չե՞ս եզրակացնում, թէ հարկ է վախենալ ոչ թէ անարդար մահից, այլ մեղքերի մէջ մեռնելուց։ Աբելն անարդարաբար է մեռնում, Կայէնն ապրում է անվերջ շշնջիւնի եւ սարսափի մէջ։ Ասա՛ ինձ՝ նրանցից ո՞վ է աւելի երանելի. նա, ով ստացաւ արդար հանգստութիւն, թէ՞ նա, ով արդար պատիժ ստացաւ։ Ասա՛ ինձ՝ կա՞յ աւելի յանցաւոր բան, քան սպանութիւնը։ Սակայն դա անողը երբեմն ճշմարտութիւնն է

բացայայտում... Ուրեմն, անմտորէն չողբանք մեռածների Համար, այլ լանք նրանց Համար, ովքեր մեռնում են մեղքերի մէջ. սրա՛նք են արժանի լացի, աղաղակի եւ արցունքների»¹:

Հետեւաբար, երբ գայթակղութիւնը գայ, երբ տեսնես արդարների տեսանելի դժբախտութիւնն ու ամբարիշտների կարծեցեալ երջանկութիւնը, նախ յիշի՛ր Սողոմոն Իմաստունի խօսքը. «Նայի՛ր Աստուծոյ գործերին. ո՞վ կարող է ուղղել այն, ինչ խախտել է Աստուծո» (Ժող. 7, 14): Սողոմոնը, իր մասին վկայելով, ասում է, թէ նման դժբախտութիւններ միշտ եղել են անցեալում. «Ես իմ ունայնութեան օրերին տեսայ ամէն ինչ. արդար կայ, որ իր արդարութեան մէջ կորչում է, ամբարիշտ էլ կայ, որ սալրում է իր չարութեամբ» (Ժող. 7, 16): Երեմիա մարգարէն այսպէս է դիմում Աստծուն. «Արդար ես դու, Տէ՛ր, բայց ես իմ դասըր պէտք է պաշտպանեմ ու իմ իրաւունքի մասին խօսեմ. ինչպէ՛ս է, որ ամբարիշտների բռնած գործերը յաջողւում են, եւ բոլոր նրանք, ովքեր արեւմարհում են ու անարգում, երջանիկ դարձան: Տնկեցիր նրանց, եւ նրանք արմատ գցեցին, որդիներ ունեցան, պրտող տունեցին: Դու, Տէ՛ր, նրանց շուրթերին ես, սակայն հեռու ես նրանց սրտերից» (Երեմ. 12, 1-2): Ամբարիշտների երջանկութիւնն ունայն է եւ անվստահելի, քանի որ նրանց Հարստութիւնը, իշխանութիւնն ու փառքը շուտով պիտի ոչնչանան. «Մի՛ վախեցիր, երբ մարդ հարաւրանում է, եւ մեծանում է փառքը նրա տան, քանզի մեռնելիս հեքը ոչինչ չի տանի, եւ նրա տան փառքն իր հեք չի թաղուի» (Սաղմ. 48, 17-18): Երանելի Դաւիթն ասում է. «Մի՛ նախանձիր չարամիտներին եւ ոչ էլ նրանց, ովքեր անօրէնութիւն են գործում, քանզի նրանք խոտի պէս իսկոյն կը չորանան, դալար խոտի պէս արագ կ'անցնեն... Ես մի փոքր ժամանակ, եւ այլեւս ամբարիշտ չի մնայ» (Սաղմ. 36, 2-3: 11): Եւ դարձեալ. «Ոչխարների պէս դժոխքի պիտի մատնուեն, ու մահը պիտի հովուի նրանց, եւ առաւօտեան արդարները պիտի նրանց տիրեն: Նրանց օգնութիւնը կը սպառուի դժոխքում, եւ նրանք իրենց փառքը կը կորցնեն» (Սաղմ. 48, 15): Տէր Յիսուս ասում է. «Երանի՛ է ձեզ, երբ

1 Սբ. Յովհան Ոսկեբերան, «Ճառերի ընտրանի», Ս. Էջմիածին, 2007, էջ 216-217: 26

որ մարդիկ ձեզ ասեն և երբ որ ձեզ մերժեն և նախասրեն ու մարդու Որդու պատճառով ձեր մասին չար անուն հանեն» (Ղուկ. 6, 24):

Սա՛ է ճշմարիտ քրիստոնեայի վիճակը ներկայ կեանքում՝ աշխարհի ատելութիւնն իր բոլոր հետեւանքներով: Աշխարհի չափաքանակ ոգին ատում է նրան. «Իսկ նրանք, որ քրիստոնեաներ են, խաչն են հանում իրենց մարմինները՝ կրթերով և ցանկութիւններով հանդերձ» (Գաղ. 5, 24): Տէրն ասում է. «Ես նրանց Կուսքի Քո խօսքը, և աշխարհը նրանց արեց, որովհետև նրանք աշխարհից չեն, ինչպէս որ ես էլ աշխարհից չեմ» (Յովհ. 17, 14): Բայց քանի որ նրանք, որոնց Նա ընտրեց աշխարհից (Յովհ. 15, 19), աշխարհի կողմից ենթարկւում են զանազան յարձակումների, Աստուած խոստանում է նրանց դրախտի երանութիւնն ու յաւիտենական փրկութիւնը: Ինչո՞ւ է Յիսուս ասում. «Երանի՛՜ ձեզ...»: Որովհետև չար աշխարհի փորձանքներն ու նեղութիւնները չեն կարող ճշմարիտ քրիստոնեային զրկել այն վիճակից, որի մէջ Տէր Յիսուս Քրիստոսն է դրել: Շատերը, երբ երջանիկ են ապրում, կարծում են, թէ ամբողջ հոգով սիրում են Տիրոջը: Պետրոս առաքեալը պնդում էր Տիրոջը երբէք չմոռանալ: Քրիստոսի միւս աշակերտներն ուզում էին Նրա հետ նոյնիսկ մահուան գնալ: Բայց երբ փորձութեան պահը եկաւ, Պետրոսը երեք անգամ ուրացաւ իր Տիրոջը, իսկ մնացած աշակերտները ցրուեցին: Եւ այսպէս, սրտի կսկիծի մէջ հասկացան, թէ դեռ այնպէս չեն, ինչպէս պէտք էր լինէին. հասկացան, թէ այն հոգեվիճակում չէին գտնւում, երբ յետոյ ուրախութեամբ իրենց Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի անուան համար արժանի եղան կրելու անարգանք ու հալածանք (տե՛ս Գործ. 5, 41): Սրա համար երանելի Դաւիթն աղօթում էր. «Փորձի՛ր ինձ, Աստուած, ու ճանաչի՛ր իմ սիրտը, քննի՛ր ինձ ու ճանաչի՛ր իմ շաւղիները» (Սաղմ. 138, 23):

Վերջապէս, մեր նեղութիւններն ու վշտերը (որ չար ու ռիսակալ աշխարհն է պատճառում), մեզ օգտակար են լինում այն իմաստով, որ ամրացնում ու զօրացնում են մեզ փրկութեան ճանա-

պարհին: Առանց փորձութիւնների, նեղութիւնների, չարչարանքների եւ տխրութիւնների մարդ չի ճանաչում իր ներքին հոգեւոր վիճակը եւ անգիտակցաբար դառնում է անտարբեր՝ սրբութեան ու բարութեան նկատմամբ: Այս աշխարհի փորձութիւններն ու նեղութիւններն արթնացնում են քնածին ու չեն թողնում անտարբեր մնալ փրկութեան հանդէպ, այլ որպէս Քրիստոսով ընտրեալ (տե՛ս Հռոմ. 16, 10)՝ հոգեւոր կեանքում իրեն դարձնում են փորձառու եւ հաստատուն. «Պարծենում ենք մեր նկոյթիւնների մէջ եւս, քանզի զիտենք, որ նկոյթիւնները համբերութիւն են բերում, համբերութիւնը՝ փորձատրութիւն, փորձատրութիւնը՝ յոյս: Յոյսը երբէք չի ամաչեցնում, որովհետեւ Աստուծու սէրը սիրտում է մեր սրտերում Սուրբ հոգու միջոցով, որ պրտեց մեզ» (Հռոմ. 5, 3-5):

Շատերն են մտատանջում, թէ ինչո՛ւ է Աստուած այս կեանքում ոմանց տալիս հարստութիւն եւ երջանկութիւն, իսկ ուրիշներն ապրում են աղքատութեան մէջ՝ ենթարկուելով բազում նեղութիւնների, տառապանքների ու դժբախտութիւնների: Այս հարցին պատասխանում է աւանդաբար մեզ հասած հետեւեալ պատմութիւնը, որը ցոյց է տալիս, թէ ամէն մարդ իր խաչի համար պէտք է գոհ ու շնորհակալ լինի նախախնամող Աստծուց, որովհետեւ Տէր Աստուած մեզանից աւելի լաւ գիտէ, թէ որին ի՛նչ է օգտակար, եւ իւրաքանչիւրին տալիս է իր համբերութեան ու կարողութեան չափով:

Աշխատասէր մի երկրագործ կար, որ իր աշխատանքի համեմատ շատ քիչ էր վարձատրւում ու հազիւ ծայրը ծայրին հասցնելով՝ իր ընտանիքը մեծ դժուարութեամբ էր կերակրում: Մի օր ծովի եզրին գտնուելով՝ դիտում էր, թէ ինչպէ՛ս բեռնուած հսկայ նաւերը բազմապիսի ապրանքներով մօտենում էին նաւահանգստին եւ ապրանքները տեղափոխում՝ առուծախ անելու համար: Սա տեսնելով՝ իր մտքին եկաւ մեղսալի մի խորհուրդ, թէ ինչո՛ւ է Աստուած ոմանց տալիս հարստութիւն ու բարեկեցութիւն, մինչ ուրիշներին թողնում է դժբախտութեան ու նեղութիւնների մէջ:

Եւ նա սկսեց տրտնջալ ու բողոքել իր ապրած թշուառ ու դառն կեանքի համար: Եւ ահա երկրագործը ծովի եզերքին քուն մտաւ ու տեսաւ մի տեսիլք, որտեղ ինքը կանգնել էր մի մեծ լերան ստորոտին, եւ երկար մօրութեամբ պատուաւոր մի ծերունի մօտեցաւ իրեն ու ասաց. «Հետեւի՛ր ինձ»: Հնազանդութեամբ՝ գնաց ծերունու հետեւից: Երկար քայլելուց յետոյ նրանք հասան մի տեղ, որտեղ զանազան տեսակի ու չափի խաչեր կային՝ փոքր ու մեծ, պատրաստուած ոսկուց եւ արծաթից, երկաթից ու պողպատից, քարից ու փայտից: Ծերունին ասաց երկրագործին. «Տեսնո՞ւմ ես, թէ որքա՛ն բազմատեսակ խաչեր կան այստեղ. սրանցից ընտրի՛ր որեւէ մէկը ու տար ա՛յն լեռը, որը հիմա տեսնում ես»: Երկրագործի աչքին անմիջապէս եկաւ ոսկեայ խաչը, որովհետեւ շատ գեղեցիկ ու լուսափայլ էր, ինչպէս արեւը: Նա ընտրեց ոսկեայ խաչը ու փորձեց իր ուսին դնել, սակայն չէր կարողանում խաչը ոչ միայն բարձրացնել, այլեւ նոյնիսկ շարժել տեղից: Ծերունին ասաց. «Երեւում է՝ չես կարողանում այս խաչը լեռը տանել. ընտրի՛ր մէկ այլ խաչ: Ահա՛, այս արծաթէ խաչը վերցրո՛ւ, գուցէ այս մէկը կարողանաս քո ուժով տանել»: Փորձեց արծաթէ խաչը վերցնել: Իրօք որ այս մէկը մի քիչ աւելի թեթեւ էր ոսկեայ խաչից, բայց դարձեալ չկարողացաւ մի բան անել: Նոյնը եղաւ, երբ փորձում էր տանել երկաթէ, պողպատէ ու քարէ խաչերը: Ծերունին խորհուրդ տուեց վերցնել փայտէ խաչը: Այն ժամանակ երկրագործը, ընտրելով ամենափոքր ու թեթեւ փայտէ խաչը, հեշտութեամբ բարձրացրեց ու տարաւ լեռը: Շատ ուրախացաւ, որ վերջապէս իր կարողութեան եւ ուժի համեմատ մի խաչ գտաւ ու ծերունուն հարցրեց. «Իսկ ի՞նչ է իմ վարձքը սա անելու համար»: Ծերունին պատասխանեց. «Որպէսզի դու ինքդ հասկանաս, թէ ինչպէ՛ս պիտի վարձահատոյց լինես, քեզ պիտի յայտնեմ քո տեսած խաչերի նշանակութիւնը: Ուրեմն, ոսկեայ խաչը, որ դու սկզբից ընտրեցիր, թագաւորական խաչն է: Դու կարծում ես, թէ որքան լաւ ու հեշտ է թագաւոր լինելը, բայց չես

Հասկանում, թէ որքա՛ն դժուար բան է թագաւորական իշխա-
նութիւն ունենալը: Թագաւորական խաչն ամենածանր խաչն է,
ու թագաւոր լինելը շատ դժուար բան է: Ահա՛ դու ծովի եզրին
Հանգիստ քնեցիր ու շատ մեծ հոգսեր չունես՝ բացի ընտանիքդ
Հանապազօր կերակրելու հոգսից: Իսկ թագաւորը երբէք հան-
գիստ չունի, որովհետեւ Աստծու կողմից նրան տրուած է ամբողջ
պետութեան հոգատարութիւնը: Գիշեր ու ցերեկ նա զբաղուած
է կառավարական գործերով ու հոգսերով, թշնամիներից երկիրը
պաշտպանելու եւ ապահովութեան խնդիրներով: Այս պատճառով
նա գրեթէ հանգստանալու ժամանակ չունի, այլ օրէնքներ է
սահմանում եւ ինքն էլ հսկում է, որպէսզի այդ օրէնքները կա-
տարուեն ու ճշգրիտ կերպով գործադրուեն: Հիմա մտածի՛ր, թէ
որքա՛ն դժուար է այս ամէնը կատարելը ու կը հասկանաս, թէ
ինչո՛ւ թագաւորական այս ոսկեայ խաչը, թէեւ շատ գեղեցիկ ու
լուսափայլ է, ինչպէս արեւը, բայց բոլոր խաչերից ամենածանրն
է: Իսկ արծաթէ խաչը նրանց համար է, ովքեր ունեն նուազ իշ-
խանութիւն: Սա եկեղեցու առաջնորդների ու հովիւների, թա-
գաւորների անմիջական ծառաների, խորհրդատուների, կառա-
վարիչների ու նախագահների խաչն է: Թէեւ սրանց համար այն-
քան դժուար չէ, ինչպէս թագաւորի համար, բայց սրանք էլ ունեն
շատ հոգսեր ու նեղութիւններ: Պողպատէ խաչը նրանց համար է,
որոնց Աստուած հարստութիւն տուեց: Դու սրանց նախանձում
ես ու մտածում, թէ ի՛նչ երջանիկ մարդիկ են: Բայց իմացի՛ր, թէ
հարուստների համար աւելի դժուար է, քան քեզ համար: Այո՛,
ճշմարիտ է, թէ հարուստներն իրենց ձեռքերով աշխատելու կարիք
չունեն, որպէսզի կերակրեն իրենց ընտանիքներին, քանի որ ամէն
բան ունեն: Բայց ունեն նաեւ շատ թշնամիներ ու նախանձողներ:
Դու աշխատանքից յետոյ կարող ես հանգիստ ննջել, եւ ոչ ոք չի
կարող քո ունեցուածքը յափշտակել: Իսկ հարուստն օր ու գիշեր
միշտ տազնապի մէջ է ու վախենում է, որ մէկն իրեն կը խաբի ու
կը կողոպտի: Դու աւելորդ դրամ չունես, ու Տէրը քեզ չի դատում,

եթէ չօգնես աղքատին, իսկ Հարուստն իր Հարստութեան Համար Աստծուն Հաշիւ է տալիս, թէ ինչպէ՛ս այն օգտագործի: Բայց երբ ընկնի դժբախտութեան մէջ ու կորցնի իր Հարստութիւնը, որքա՛ն նեղութիւններ են գալիս իր վրայ: Աւելի լաւ է աղքատ ծնուել, քան լինել Հարուստ ու յանկարծ զրկուել ամէն բանից: Յիսուս մի առիթով զգուշացնում էր. «Տեսէ՛ք, որ զոյշ լինէք ամէն տեսակի ագահութիւնից, որովհետեւ մարդու կեանքն իր կուտակած հարստութեան մէջ է» (Ղուկ. 12, 15): Պօղոս առաքեալն էլ խրատում է. «Իսկ ովքեր հարստանալ են ուզում, ընկնում են փորձութեան, որոգայթի և բազում անմիտ ու վնասակար ցանկութիւնների մէջ, որոնք ընկղմում տանում են մարդկանց դէպի կործանում և դէպի կորուստ, որովհետեւ բոլոր չարիքների արմատը փոխասիրութիւնն է, որին ունանք ձգտելով՝ մոլորուեցին հաւատից և իրենք իրենց զգեցին բազում ցաւերի մէջ» (Ա Տիմ. 6, 10-11): Յիրաւի ծանր է այս խաչը ու շատ ծանր: Ո՞ր Հարուստը կարող է վստահ լինել, թէ կարող է զերծ մնալ այսպիսի խաչից: Երկաթէ խաչը զինուորների խաչն է: Հարցրո՛ւ նրանց, ովքեր պատերազմի մէջ են եղել, ու նրանք քեզ կը պատմեն, թէ ի՛նչ տառապանքների ու զրկանքների միջով են անցել: Նրանք երգում են տալիս, թէ պատրաստ են իրենց կեանքը զոհել յանուն Հաւատի, թագաւորի ու Հայրենիքի: Ծանր է այս խաչը: Քարէ խաչը վաճառական մարդկանց խաչն է: Դու ուզում ես նրանց նման ապրել, որովհետեւ նրանք քեզ պէս չեն աշխատում: Իսկ արդեօք չի՞ եղել, երբ վաճառականը իր բոլոր ունեցուածքը տարբեր պատճառներով կորուստի է մատնել: Նրանցից ո՞վ կարող է վստահ լինել, թէ իր կեանքն ապահով եւ երջանիկ է լինելու: Նրանցից ո՞վ կարող է վստահ լինել, թէ երբէք չի սնանկանալու, ու որքան շատ դրամ չահի, այնքան աւելի շատ հոգսերի մէջ կ'ընկնի: Նախանձելի չէ նրանց խաչը, եւ ոչ բոլորը կարող են այն կրել: Քեզ՝ երկրագործիդ Համար ոչ մի պարտադրանք չկայ ստելու կամ գողանալու, իսկ վաճառականի Համար միշտ շարժառիթներ են ստեղծուում: Զուր չէ, որ Սուրբ Գիրքն ասում է. «Դժուար

թէ վաճառականը խուսափի յանցանքներից, եւ պանդոկատպանն արդարանայ մեղքերից» (Սիր. 26, 28): «Ինչպէս իրար կից քարերի միջեւ ցից է խփում, այնպէս էլ մեղքն է փեղ գրկում վաճառելու ու գնելու միջեւ» (Սիր. 27, 2): Ահա թէ ի՛նչ փորձութիւնների մէջ է ընկնում վաճառականը: Որքա՛ն ուշադիր պէտք է լինի, որ Աստծու առաջ մեղք չգործի ու մերձաւորին չվշտացնի: Հետեւաբար, հեշտ չէ ազնիւ ու բարի վաճառականի համար կրել այս խաչը: Իսկ այն փայտէ խաչը, որ դու այդքան հեշտ լեռը բարձրացրիր, դա՛ է քո խաչը: Դու բողոքում էիր, թէ քո կեանքը շատ դառն է ու տանջալի, բայց հիմա տեսնո՞ւմ ես, թէ այն շատ աւելի՛ հեշտ է, քան ուրիշ մարդկանցը: Քո աշխատանքը՝ երկրագործութիւնը, ամէնից անմեղ աշխատանքն է: Ո՞վ գիտէ՝ եթէ հարուստ լինէիր, գուցէ երջանկութեան մէջ մոլորուէիր, եթէ իշխանատէր լինէիր, գուցէ բոլորին նեղութիւն պատճառէիր, եթէ վաճառական լինէիր, գուցէ բոլորին խաբէիր, իսկ եթէ զինուոր լինէիր, չէիր կարողանայ զինուորական զրկանքներն ու չարչարանքները կրել եւ Աստծուն կը մեղադրէիր: Բայց ամենատես ու սրտագէտ Աստուած գիտէ, թէ բոլոր այլ իրավիճակների ու կոչումների մէջ դու հոգիդ էիր կործանելու: Այդ պատճառով Նա քեզ տուեց ամենախոնարհ եւ ամենաթեթեւ փայտէ խաչը: Հետեւաբար, զնա՛ ու մի՛ բողոքիր ու մի՛ մեղադրիր Աստծուն՝ քեզ բաժին ընկած աղքատութեանդ համար: Աստուած բոլորին տալիս է ըստ իրենց կարողութեան եւ այնքան, որքան նրանք կարող են տանել»: Ծերունու այս խօսքը լսելուց յետոյ երկրագործն արթնացաւ, գոհութիւն ու շնորհակալութիւն յայտնեց Աստծուն այս իմաստալից տեսիլքի համար, որ իրեն տրուեց, եւ այլեւս երբէք չէր գանգատուում Աստծուն:

Ուստի մեզ տրուած բազմապիսի նեղութիւնների համար միայն գոհութիւն պէտք է յայտնել նախախնամող Աստծուն: Սա մեզ համար լաւ դաս է, որպէսզի մենք էլ միշտ գոհ լինենք այն վիճակից, որի մէջ Աստուած յարմար գտաւ դնել մեզ: Ամէն մարդ պէտք է այս կեանքում համբերութեամբ կրի այն խաչը, որ

Աստուած տալիս է իրեն: Աստուած մեզ բոլորիս իւրայատուկ է սիրում Իր հայրական սիրով եւ սրա համար ամէնքին տալիս է այն, ինչն օգտակար է իրեն: Հետեւաբար, երբէք չգոհե՛նք մեր կեանքի համար, քանի որ դա մեծագոյն մեղք է: Ինչ որ Աստուած տալիս է մեզ, լինի՛ երջանկութիւն թէ դժբախտութիւն, հարստութիւն թէ աղքատութիւն, առողջութիւն թէ հիւանդութիւն, ամէն բանի համար լինենք շնորհակալ, քանի որ մեր Տէրը մեզանից լաւ գիտէ, թէ ի՛նչն է օգտակար եւ ի՛նչն է վնասակար մեզ համար:

Առակը պատմում է մի թագաւորի մասին, որի ծառան միշտ օգնում էր իրեն բոլոր գործերում: Ծառան ամէն առիթով անընդհատ թագաւորին ասում էր. «Ամէն ինչ լաւ կը լինի, ամէն ինչ լաւ է»: Մի օր նրանք գնացին որսի, եւ ինչ-որ բան պատահեց ծառայի բռնած աղեղի հետ: Յանկարծակի նա կրակեց, որի պատճառով աղեղը կտրեց թագաւորի մատը: Զայրացած թագաւորը բղաւում էր. «Այդ ի՛նչ արեցիր ինձ, ցաւո՛ւմ է, ցաւո՛ւմ է»: Իսկ ծառան դիմելով նրան, առանց վախի կրկին ասաց. «Ամէն ինչ լաւ կը լինի»: Թագաւորը սաստիկ բարկացած ասում է. «Ինչպէ՞ս լաւ կը լինի, խելագա՛ր, գիտակցո՞ւմ ես, թէ ի՛նչ ես ասում: Հիմա բանտ կը գնաս եւ այնտեղ կը հասկանաս, թէ ի՛նչ է նշանակում «ամէն ինչ լաւ է»: Ծառային բանտը նետեցին, իսկ թագաւորը մնաց առանց մատի: Սակայն նա շարունակ որսի էր գնում, քանի որ դա նրա թոյլ կողմն էր: Մի անգամ անտառում թագաւորը հեռացաւ միւսներից, գնաց սովորականից աւելի հեռու եւ այնտեղ գերի ընկաւ տեղաբնիկների կողմից, որոնք նպատակ ունէին նրան զոհաբերել իրենց աստուածներին եւ յետոյ ուտել, քանի որ այդ ցեղի բնիկները մարդակերներ էին: Այսպիսով, նրանք ճանապարհին երգում էին. «Մենք բռնեցինք թագաւորին, հիմա մենք նրան կը սպանենք եւ կ'ուտենք»: Միեւնոյն ժամանակ, թագաւորը տխուր մտածում էր իր վախճանի մասին եւ ասում. «Տեսէ՛ք, թէ ինձ ի՛նչ է սպասւում: Բոլոր իմ ծառաները վախենում են ինձանից, իսկ սրանք ինձ կենդանի

կ'ուտեն, եւ ես չգիտեմ՝ ինչպէ՛ս փրկուեմ»։ Եւ երբ նրանք պատրաստուեցին սպանել նրան, տեղացիներէից մէկը նկատեց, որ թագաւորը մի մատ չունի։ Ու նրանք սկսեցին բղաւել. «Ա՛խ, ա՛խ, հիմա մենք չենք կարող կատարել զոհաբերութիւնը եւ ուտել այն, քանի որ նա մարմնական վնասուածք ունի»։ Այսպիսով, նրանց «աստուածը» պատուիրում է, ըստ իրենց աւանդութեան, որ կարելի է զոհաբերել «աստծուն» եւ ուտել միայն այն մարդուն, որը չունի մարմնական որեւէ վնասուածք։ «Ա՛խ, ի՛նչ ափսոս,~ ասում է ցեղապետը,~ լաւ, գնա՛ այստեղից։ Դու արժանի չես, որ մենք քեզ ուտենք»։ Թագաւորը խաչակնքուեց, շնորհակալութիւն յայտնեց Աստծուն ու շուտ հեռացաւ։ Նա ասում էր. «Ա՛խ, ա՛խ, ես փրկուեցի, ես փրկուեցի, քանի որ մատ չունէի»։ Թագաւորը մեծապէս ուրախացաւ եւ յիշեց իր ծառային, որին բանտ էր նետել։ Անմիջապէս հրամայեց ազատ արձակել նրան։ Ծառային կանչեցին թագաւորի մօտ։ Թագաւորը մեծ հուզմունքով ծառային ասաց. «Ների՛ր ինձ, իմ ծառայ, այն բանի համար, ինչ քեզ եմ արել։ Ես քեզ մեծ տանջանք պատճառեցի, իմ պատճառով դու բանտ ընկար»։ Ծառան, զիմելով թագաւորին, կրկին ասաց. «Լաւ է, ամէն ինչ լաւ է, իմ թագաւոր, մի՛ անհանգստացիր»։ Թագաւորն ասաց. «Դու բանտում էիր ու միշտ ասում՝ «ամէն ինչ լաւ է»։ Ծառան ասում է. «Բայց, իմ թագաւոր, եթէ ես բանտ չընկնէի եւ անտառում որսի ժամանակ քո կողքին լինէի, նրանք ո՞ւմ պիտի ուտէին։ Նրանք ինձ կ'ուտէին։ Դու մի մատ չունէիր եւ փրկուեցիր։ Իսկ ես ունեմ բոլոր մատները, եւ ես չէի փրկուի»։ Թագաւորը հասկացաւ, որ իրականում ամէն ինչ լաւ է այնպէս, ինչպէս պատահում է։ Աստուած գիտէ, թէ ինչպէ՛ս է ամէն ինչ պատահում։ Հետեւաբար, թոյլ է տալիս, որ այդպէս լինի։

Աստուածային իմաստութեան ու տնօրինութեան համաձայն՝ այս երկրային կեանքի պանդխտութեան ժամանակ Աստծու ընտրեալները ենթարկուում են զանազան վշտերի, նեղութիւնների ու տառապանքների։ Քրիստոնեայի համար այս ժամանակաւոր

կեանքը ճանապարհ է դէպի երկնային Հայրենիք եւ ըստ Աստծու անքննելի իմաստութեան, նախատեսութեան ու կանխագիտութեան՝ մարդիկ ենթարկւում են ամէնօրեայ փորձութեան, վշտահարութեան ու նեղութեան, որպէսզի այս երկրային ճանապարհը երկնային Հայրենիքից աւելի չսիրեն: Այս պատճառով աշխարհի ճանապարհները հեզասահ չեն, այլ տագնապալի ու դժուար, որպէսզի մարդիկ, մի կերպ վայելելով այս անցողիկ կեանքի ուրախութիւններն ու հաճոյքները, գերի չդառնան այդ ճանապարհի գեղեցկութեանն ու չմոռանան, թէ ի՛նչ է սպասւում իրենց երկնային Հայրենիքում: Այս աշխարհում ամէն բան խառնուած ու ձուլուած է սգի լեղիով, որպէսզի մարդիկ այս աշխարհի փափկալից քաղցրութիւնը չհամարեն կատարեալ բարիք: Երանելի Օգոստինոսը, 43-րդ սաղմոսը մեկնաբանելով, նշում է. «Եթէ Աստուած մեզ գոհացնէր ամէնօրեայ բարիքներով եւ ամենայն առատութեամբ, եւ այս կարճ ու անցողիկ կեանքում ոչ մի նեղութիւն կամ վիշտ չտար, ապա մենք ամենակատարեալը կը համարէինք այն բարիքները, որոնք Աստուած մեզ է տալիս այստեղ, եւ աւելին երբէք չէինք սպասի իրենից»: Ուստի այս կեանքի կարծեցեալ քաղցրութիւնն Աստուած լուծում է վշտերի դառնութեամբ, որպէսզի մենք ձգտենք ճշմարիտ, կատարեալ ու փրկարար երանութեանը: Արդարեւ, խաչն ու չարչարանքը ոչ միայն օգտակար են, այլ նոյնիսկ անհրաժեշտ: Ուրեմն, բնաւ պէտք չէ զանց առնել զանազան նեղութիւնների կարեւորութիւնը: «Նեղութիւնը համբերութեան մայրն է. եւ ամէնից աւելի մեզ համբերութիւն է անհրաժեշտ մեր ներկայ կեանքի համար տեսակ-տեսակ նեղութիւնների պատճառով» ~ ասում է սբ. Գրիգոր Տաթեւացին: Իսկ փրկութիւնը համբերութեամբ է տրւում, ըստ այնմ. «Ձեր համբերութեամբ պիտի շահէք ձեր հոգիները» (Ղուկ. 21, 19):

Մարդկանց պատահած նեղութիւնները բազում պատճառներ ունեն, որոնք կարող են Աստծու թոյլտուութեամբ պատահել: Տէրն իր աշակերտներին զգուշացրեց. «Այսպէս, աշխարհում նեղութիւն

պիտրի ունենար» (Յովհ. 16, 33): Նաեւ ասում էր. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ դուք պիտրի լար եւ պիտրի ողբար, իսկ աշխարհը ուրախ պիտրի լինի. դուք պիտրի տրտմւէք, բայց ձեր տրտմութիւնը ուրախութեան պիտրի փոխուի» (Յովհ. 16, 20): Եւ դարձեալ ասում է. «Դուք էլ այժմ տրտմութիւն ունէք, բայց եւ դարձեալ ձեզ պիտրի տեսնեն, ու ձեր սրտերը ուրախ պիտրի լինեն. եւ ձեր ուրախութիւնը ոչ որ ձեզնից չպիտրի խլի» (Յովհ. 16, 22): Տիրոջ առաքեալներն էլ, հաւատացեալների սրտերը հաստատելով, յորդորում էին, որ իրենց հաւատի մէջ հաստատ մնան. «Բազում նեղութիւններ կրելով է, որ մենք պէտք է մտնենք Աստուծոյ արքայութիւնը» (Գործ. 14, 21):

Իսկ որո՞նք են մարդկանց պատահած նեղութիւնների բազում պատճառները, որոնք կարող են նաեւ Աստծու թոյլտուութեամբ լինել: Սուրբ վարդապետները նշում են, թէ ոմանք նեղութիւններ են կրում, որպէսզի ծածուկ գործած առաքինութիւնները յայտնի դառնան, ինչպիսին էր Յորի օրինակը: Ոմանք էլ նեղութիւններ են կրում, որպէսզի ճշմարիտ խորհուրդներից եւ իրենց տրուած զօրութիւնից չընկնեն հպարտութեան մէջ, ինչպէս եղաւ Եղեկիա թագաւորին: Իսկ ոմանք էլ նեղութիւնների մէջ են ընկնում ուրիշներին ուղղութիւն տալու համար, որպէսզի սրանց տեսնելով՝ ուրիշները խրատուեն, ինչպէս Ղազարոսի եւ մեծահարուստի պատմութիւնն է ցոյց տալիս: Ոմանց էլ նեղութիւններ են պատահում Աստծու փառքի համար, ինչպէս եղաւ ի ծնէ կոյրին: Իսկ ոմանց էլ նեղութիւններ են պատահում՝ ուրիշների նախանձախնդրութիւնն արթնացնելու եւ չարհարողոյնների փառքի ու բարի գործերի համար ակնկալուող հանդերձեալ կեանքի յոյսի համար, ինչպէս Քրիստոսի սիրոյ համար մարտիրոսներին ու նահատակներին եղաւ: Ով որ փորձուած է, կարող է փորձութեան մէջ ընկածներին օգտակար լինել: Եւ դեռ նեղութեան մէջ ենք ընկնում, որպէսզի զարհուրելով յանցանք չգործենք, իսկ եթէ յանցանք էլ գործենք, ուղղուենք ու նեղութեան ժամանակ դառնանք բարեբար Աստծուն, ինչպէս մարգարէներն

են ասում. «Նեղությունս մէջ ես Տիրոջը ձայնս լսուի, եւ Նա լսեց ինձ» (Սաղմ. 119, 2: 17, 7: Բ Թագ. 22, 7): «Երբ հոգիս տկարացաւ, քն՛դ դիմեցի, Տէ՛ր իմ Աստուած. մարտերեցի Տիրոջը, եւ թող իմ աղօթքները հասնեն Բո սուրբ տաճարը» (Յովն. 2, 8):

Յայտնի է, թէ, ըստ Աստծու տնօրինութեան, ով որ այս կեանքում համբերութեամբ ու բարեհաճութեամբ է կրում նեղութիւնն ու տառապանքը, հանդերձեալ կեանքում անկնկալում է ուրախութիւն եւ հակառակը, ո՛վ որ այստեղ միայն աշխարհիկ ուրախութիւն ու մարմնաւոր վայելքներ է փնտռում, այդպիսին տանջանք է գտնում: Աւետարանում Աբրահամը հարուստին ասաց. «Որդեակ, յիշի՛ր, որ դու սրացար քո բարիքներդ այնպէս, քո կեանքի ընթացքում, իսկ Ղազարոսն էլ՝ չարչարանքները. այժմ սա այսպէս մխիթարում է, իսկ դու այդպէս պապական ես» (Ղուկ. 16, 25): Որի՞նչ չի սարսափեցնում հարուստի մասին ասուած այս առակը, որին այս աշխարհի հաճոյքներն ու վայելքները մատնեցին գեհե՛նի. քանի որ, ինչպէս սուրբ վարդապետներն են մեկնաբանում, ո՛չ թէ անարդարութեան գործերի համար, այլ այս կեանքի հեշտասիրութեան համար նա դատապարտուեց ու յաւիտենական կրակի տանջանքներին մատնուեց: Սրա համար նրանք, ովքեր փնտռում են միա՛յն այս աշխարհի մարմնաւոր հաճոյքների բաւարարումն ու հանգստաւէտ կեանքի բարիքները, ծոյլ ու պղերգ գտնուելով առաքինութիւններ գործելու մէջ, իրենց վրայ են հրաւիրում Աստծու դատապարտութիւնը. ու խաչը չընդունողները կամ անարգողները պիտի ենթարկուեն յաւիտենական տանջանքների: Աւետարանի մէջ Տէրն արդեօք չզգուշացրե՞ց մարդկանց, իր զգաստացուցիչ «վա՛յ»-երով, երբ ասաց. «Բայց վա՛յ ձեզ՝ հարուստներիդ, որովհետեւ դուք ձեր մխիթարութիւնը սրացել էք: - Վա՛յ ձեզ, որ այժմ յագեցած էք, որովհետեւ քաղցած պիտի մնաք: - Վա՛յ ձեզ, որ այժմ ծիծաղում էք, որովհետեւ պիտի սգաք ու պիտի լաք: - Վա՛յ ձեզ, երբ որ բոլոր մարդիկ լաւ խօսեն ձեր մասին, որովհետեւ նրանց հայրերը սուր մարգարէներին այդպէս էին անում» (Ղուկ. 6, 24-26):

Պէտք է զարմանալ Աստծու բարի կամքի այս տնօրինութեանը: Արդարեւ մարդու կեանքում չկայ այնպիսի ուրախութիւն, որ չձուլուի վշտի ու տրտմութեան հետ: «Երբ կինը ծննդաբերում է, նրա համար փրկանքն է, որովհետեւ նրա ժամը հասած է. բայց երբ մանկանը ծնի, այլևս չի յիշում նեղութիւնը՝ ուրախութեան պարճառով, որ աշխարհում մի մարդ ծնունդ է» (Յովհ. 16, 21): Անցողիկ վշտի տխրութիւնը զօրացնում է գալիք ուրախութիւնը. հիւանդութիւնից յետոյ առողջութիւնը աւելի՛ թանկարժէք է դառնում: Բացի դրանից՝ խաչի չարչարանքներով «Տէր Աստուածը փորձում է ձեզ, իմանալու համար, թէ ձեր ամբողջ հոգով ու ձեր ամբողջ էութեամբ սիրո՞ւմ էք մեր Տէր Աստծուն» (Բ Յովհ. 13, 3): Նաեւ գրուած է. «Բրուրի անօթները փորձում են կրակի մէջ, իսկ մարդը փորձում է իր խորհուրդների մէջ» (Սիր. 27, 6): Մենք գուցէ լսել ենք «Ոսկին փորձում է կրակի մէջ, իսկ մարդը՝ քառասանների բովում» (Սիր. 2, 5):

Արդար մարդիկ նեղութիւններով փորձւում են արդեօք: Աստուած բարեպաշտներին չի մխիթարում աշխարհիկ հաճոյքներով կամ մարմնաւոր վայելքներով, բայց փորձում է, որպէսզի նրանց պատրաստի Իր համար: Իսկ ամբարիշտներին, ովքեր Իր կողմից թողնուած են յաւիտենական տանջանքի համար, թոյլ է տալիս մխիթարուել այս անցողիկ աշխարհի հաճոյքներով ու վայելքներով: Արդարների փորձուելու մասին գրուած է. «Ու թէպէտեւ մարդկանց թուում է, թէ նրանք քանջուեցին, բայց նրանք անմահութեան հասարար յոյս ունեն, ինչպէս եւ նրանք, որոնք չխուսափեցին սակաւ ինչ քառասանքից, պիտի բարիքներ գրեն, քանի որ Աստուած փորձեց նրանց եւ նրանց էլ արժանի գրաւ իրեն: Նրանց փորձեց, ինչպէս ոսկին բովի մէջ, եւ իբրեւ ողջակէզի գոհ ընդունեց նրանց: Եւ երբ Տէրն այցելի նրանց, նրանք պիտի պայծառանան ու վեր ընթանան, ինչպէս կայծր եղէզի միջով: Պիտի դարեն ազգերին եւ քիւրեն ժողովուրդներին, եւ նրանց վրայ յափարեան թագաւորելու է Տէրը» (Իմ. Սող. 3, 4-7): Երանելի Դաւիթն Աստծուն այսպէ՛ս է դիմում. «Փորձի՛ր ինձ, Աստուած, ու ճանաչի՛ր իմ սիրտը, քննի՛ր ինձ ու ճանաչի՛ր իմ շաւղիները» (Սաղմ.

138, 23): Ուստի նրանք, ովքեր համբերում են փորձութիւններին, չարչարանքներին ու նեղութիւններին, արժանի կը լինեն Աստծու ողորմութեանը: Սրա համար Տէր Յիսուս Աւետարանի մէջ ասում է. «Եւ ով իր խաչը չի վերցնում ու Իմ յետեւից չի գալիս, Ինձ արժանի չէ» (Մատթ. 10, 38): Սրա համար սուրբ վարդապետներն ասում են, թէ արդարներից ոմանց Տէրը թոյլ է տալիս զանազան նեղութիւնների մէջ ընկնել՝ յոյսի ու փոխհատուցման համար. իսկ նրանք, ովքեր մտքով աղքատ են, թոյլ չի տայ, որպէսզի չվնասուեն. նաեւ ոմանց թոյլ է տալիս իրենց մեղքերի եւ յանցանքների համար թողութիւն ստանալ: Սակայն կան այնպիսիները, ովքեր թէ՛ այս կեանքում ու թէ՛ գալիք կեանքում տանջւում են, ինչպէս Աւետարանն է վկայում սողոմացիների համար: Եւ կան նաեւ այնպիսիները, ովքեր միայն այստեղ են տանջւում, ինչպէս մեղքի պատճառով տրտմողների դասերը: Ոմանք էլ միայն այնտեղ՝ հանդերձեալ կեանքում են տանջւում, քանի որ այս կեանքում Աստուած չհատուցեց իրենց, ինչպէս ավետարանական մեծահարուստին: Ուստի նեղութիւնը նրանո՛վ է գովելի, երբ մեղքերի՝ մաքրութեան համար է, որոնցով ոմանք մաքուր սրտով տեսնում են Աստծուն, ըստ այնմ. «Երանի՛ նրանց, որ սրտով մաքուր են, որովհետեւ նրանք մաքծուն պիտի տեսնեն» (Մատթ. 5, 8): Իսկ նեղութիւնների պատճառած վնասն այն է, որ ոմանք չարախօսում են, նախատում են ու յուսահատւում, ինչպէս աստուածաբան ավետարանիչ սուրբ Յովհաննէսն է ներկայացնում Յայտնութեան գրքում: Բայց Աստծու համար ի՞նչ անհրաժեշտութիւն կայ փորձել մարդկանց, եթէ ի սկզբանէ գիտէ ամէն մէկի բարեգործութիւնը: Նախ՝ «Ոչ ոք, երբ փորձութեան մէջ լինի, թող չասի՝ մաքծուն եմ փորձում, քանի որ մաքուր չարից չի փորձում եւ ինքն էլ չի փորձում ոչ ոքի»,~ ասում է Յակոբոս առաքեալը (Յակ. 1, 13): Աստծու կամքն ու նպատակը բարի են: Առաքեալն ասում է. «Երանելի է այն մարդը, որ համբերում է փորձութեանը» (Յակ. 1, 12), քանի որ Աստուած փորձում է, որպէսզի ենթական «փորձութեան մէջ հասարար լինի» եւ ստանայ

կենաց պսակը, որը խոստացաւ իրեն սիրողներին: Սրա համար առաքելը յորդորում է. «Եղբայրներ, ամենայն ուրախութեան արժանի՝ համարեցէք, երբ տեսակ-տեսակ փորձութիւնների մէջ ընկնէք. իմացէ՛ք, որ ձեր հաւարի փորձը համբերութիւն է առաջ բերում, իսկ համբերութիւնը թող դրսևորուի լիութեամբ, որպէսզի անթերի եւ կատարեալ լինէք, ոչ մի բանով պակաս չլինէք» (Յակ. 1, 2-4): Հաշուի առնելով այս ամէնը՝ ասենք, թէ Աստուած այն բանի համար չէ որ փորձում է, կարծես թէ ինքը ի սկզբանէ չգիտէր մարդկանց, այլ արդարներին վշտեր ու նեղութիւններ է տալիս, որպէսզի ուրիշներին էլ ցոյց տայ սրանց մեծագոյն համբերութիւնն ու հաւատը: Սակայն շատերը չեն հասկանում, թէ սուրբերն ինչպիսի՛ հոգեւոր վիճակի խորիմաստ գոհունակութեամբ են Աստծուն պաշտում ու յաճախ կարծում են, թէ սրանք միայն իրենց բարեկեցութեան համար են ներկայ կեանքում Նրան ծառայում: Բայց խաչի չարչարանքները կրելով իրենց կեանքում՝ յայտնում են իրենց սէրն ու նուիրումն առ Աստուած: Սատանան այնպէս էր կարծում, թէ արդար Յորը պաշտում է Աստծուն ժամանակաւոր բարիքների եւ իր անձի բարեկեցութեան համար: Սրա համար սատանան, ընդդիմանալով Տիրոջը, զրպարտում է նրան՝ ասելով. «Միթէ Յորը ձրի՞ է պաշտում Տիրոջը. չէ՞ որ դու եւս պաշտպանել նրան արարարուստ ու նրա տունը՝ ներքուստ, եւ ամէն ինչ, որ կայ նրա շուրջը. նրա ձեռքի գործերը դու եւ օրինել, երկրի վրայ նրա անասունները դու եւ բազմացրել» (Յոր 1, 9-10): Յոյց տալով, թէ Աստծու սուրբերն իրեն պաշտում են ո՛չ թէ բարեկեցութեան համար, Յորից վերցուեց իր ամբողջ ունեցուածքը. նա մատնուեց աղքատութեան եւ ծանր ու տանջալի հիւանդութեան: Երբ Յորը հարուստ էր, շատերը չէին ճանաչում իրեն, թէ ինչպիսի՛ մարդ էր: Սակայն արդար Յորը բոլորին զարմացրեց իր համբերութեամբ: Եւ Աստուած ինքը գովաբանեց Յորի արիութեան սխրագործութիւնը եւ յաղթանակը: Բացի դրանից՝ համբերութիւնը մեծագոյն եւ ընտիր առաքինութիւն է, բայց արդարը չփորձուե-

լով չի կարող այն ձեռք բերել: Աստուած Հայրական սիրով սիրում է առաքինասէր եւ արիասիրտ մարդկանց եւ իր անսահման սիրոյ պատճառով է, որ ոմանց այցելում է վշտերով ու զրկանքներով, որպէսզի նրանք է՛լ աւելի մեծ ուժ ու զօրութիւն ձեռք բերեն: Այն ծառը, որը պաշտպանուած է քամուց, ամուր չէ, քանի որ քամու պատճառած տատանումներից որքան շատ շարժուի, այնքան հակամէտ է իր արմատներն աւելի՛ խորացնելու. որքան ենթակայ լինի ցրտին, այնքան էլ կը կարծրանայ փայտը: Զուր չէ, որ ամէնից ամուր փայտերը հիւսիսային ցուրտ գօտիներից են գալիս: Առանց թշնամու՝ թուլանում է արիութիւնը. ու սա միայն այն ժամանակ է երեւում, երբ համբերութիւնը յայտնում է նրա զօրութիւնը: Առաքինութիւնը կարծես թէ որբանում է, եթէ չունենայ առիթներ համբերութեամբ ամրանալու: Սուրբերից մէկն ասում էր, թէ համբերութիւնն ուրախանում է վշտերի համար:

Երկնաւոր Հայրն ասում է. «Ում սիրում եմ ես, նրան յանդիմանում եմ եւ խրատում: Նախանձախնդի՛ր եղիր ուրեմն եւ ապաշխարի՛ր» (Յայտ. 3, 19): Աստծու կողմից մեզ խաչեր են ուղարկւում, որպէսզի նրանց միջոցով պսակներն ու վարձքերն էլ բազմանան մեզ համար, քանի որ վշտերի ու չարչարանքների համեմատ է՛լ աւելի են բազմանում նաեւ պարգեւներն ու գալիք փառքը, ըստ այնմ. «Ինձ այնպէս է թուում, թէ այս ժամանակի չարչարանքներն արժանի չեն բաղարկուելու գալիք փառքի հետ, որ յայտնուելու է մեզ» (Հռոմ. 8, 18): Աստուած ամէն մէկին իր ուժի համեմատ խաչ է զրկում, քանի որ «Նաւարարիւմ է Կարոյւմ, որ ձեզ աւելի փորձութեան մէջ չի զգնելու, քան կարող էք պանել. այլ՝ փորձութեան հետ փրկութեան ելք էլ է ցոյց տալու, որպէսզի կարողանաք համբերել (Ա Կորնթ. 10, 13): Սբ. Եփրեմ Ասորին ասում է. «Եթէ մարդիկ նոյնիսկ անասուններին չեն լծում իրենց ուժերից աւելի, ապա Տէրը չի տալիս փորձութիւն մարդուն իր ուժերից աւելի»: Ուստի Տէրն իր ընտրեալներին փորձութիւններ է ուղարկում, որպէսզի նրանք, աշխարհիկ բարիքները վայելելով, չմոռանան երկնային Հայրենիքը ու խա-

ղաղութեամբ հասնեն յաւիտենական փառքի գերազանցութեանը: Սողոմոն Իմաստունն ասում է հոգեսէր Տիրոջը. «Բայց դու ամէն ինչ կարգեցիր չափով, թուով ու կշռով, որովհետեւ իւրաքանչիւր ժամ քեզ հետ է քո ամենագոր ուժը, եւ ո՛վ կարող է դէմ կանգնել քո բազկի զօրութեանը» (Իմ. Սող. 11, 22): Աստուած գիտէ, թէ մարդ որքա՛ն կարող է կրել եւ ամէն բան տալիս է չափով, թուով ու կշռով: Ուրեմն չտրտմե՛նք, քանի որ Տէրն ասում է. «Նոյնիսկ ձեր գլխի բոլոր մագերէ հաշուումն են. մի՛ վախեցէք, որովհետեւ դուք շատ ատեղի յարգի էք, քան ճնճողուկները» (Ղուկ. 12, 7): Նոյնպէս՝ «Բայց ձեր գլխից մի մագ անգամ չափի կորչի: Եւ ձեր համբերութեամբ պիտի շահէք ձեր հոգիները» (Ղուկ. 21, 18-19): Աստուած մարդկանց հոգիները կշռելով է սահմանում, ինչպէս գրուած է. «Տէրը կշռում է հոգիները»¹ (Առակ. 16, 2): Մարդկանց հոգիները կշռող Տէրը չափով ու կշեռքով սահմանում է խաչեր, որպէսզի երկնքում դրանց համեմատ ու համաչափ վարձատրի պսակներով: «Որովհետեւ մեր թեթեւ նեղութեան առժամանակեայ յաճախանքը մեր մէջ առաջ է բերում յաւիտենական փառք, որ գերազանցում է ամէն ինչ. քանզի չենք նայում տեսանելի բաներին, այլ՝ անտեսանելիներին, որովհետեւ տեսանելիները ժամանակաւոր են, իսկ անտեսանելիները՝ յաւիտենական» (Բ Կորնթ. 4, 17-18):

Ուրեմն ո՞վ կարող է բողոքել, թէ իր վրայ չափից աւելի ծանր լուծ է դրւում, քան այնքան, որքան ինքը կարող է կրել: Այդպիսի ծանր լուծ մարդ կարող է տալ ուրիշին՝ չիմանալով նրա ուժը, ով կրելու է այդ բեռը: Իսկ եթէ նոյնիսկ գիտէ ու մէկին բեռ է տալիս, որը նրա ուժից վեր է, այդ դէպքում այդ անձը, իհարկէ, կը լինի դաժան: Բայց բարեգուցութ ու մարդասէր Աստուած այդպէս չի վարւում: Ինչո՞ւ է մեր մարմինը միշտ դժգոհում ու բողոքում, թէ չափից աւելին է կրում: Պօղոս առաքեալը պատասխանում է. «Արդարեւ, նրանք, որ ըստ մարմնի են, մարմնին են խորհում, իսկ նրանք, որ ըստ հոգու են, հոգունք. քանի որ մարմնաւոր խորհուրդը

1 Ուրիշ թարգմանութիւններում գրուած է. «Տէրն է դատում հոգիները»:

մնահ է, իսկ հոգևոր խորհուրդը՝ կեանք և խաղաղություն» (Հռոմ. 8, 5-6): Մարմնաւոր խորհուրդն այն թշնամին է, որ սխալ է խորհում Աստծու բարեգործութեան մասին: Աստուած չի անտեսում ու հաշուի է առնում ամէն մէկի ուժն ու կարողութիւնը: Աստուած սկզբից նախատեսել է, որ մարմնաւոր նեղութիւնները, հիւանդութիւնները կամ վշտերը կարող են օգտակար լինել մարդկանց հոգիները փրկելու համար:

Տէր Յիսուս ասում է. «Եթէ մէկը կամենում է իմ յետևից գալ, թող ուրանայ իր անձը և իր խաչը մշտապէս վերցնի ու գալ իմ յետևից» (Ղուկ. 9, 23): Թէեւ Տէրն այստեղ մի բանի մասին է խօսում, բայց հասկացւում է երեք գործողութիւն՝ անձը ուրանալը, խաչը վերցնելը եւ Քրիստոսին հետեւելը: Ուրեմն, խաչակրութեան առաջին պայմանը սեփական անձն ուրանալն է, առանց որի ոչ ոք չի կարող ըմբռնել խաչի ճանապարհը, իսկ եթէ նոյնիսկ ըմբռնի, միեւնոյն է, չի կարող մշտապէս կրել իր խաչը: Ով որ ուզում է Քրիստոսի յետեւից գնալ, պէտք է հրաժարուի ամէն ինչից: Բայց ինչպէ՞ս մարդը կարող է ուրանալ իր անձը: Մարդու համար այնքան դժուար չէ իր սեփականութիւնից հրաժարուել, որքան իր անձից: Ինչպէ՞ս հասկանալ «թող իր անձն ուրանայ» խօսքը: Մարդն իր անձն ուրանում է, երբ զղջում է, խոստովանում իր մեղքերը եւ ապաշխարութեամբ նորոգում իր անձը, ըստ այնմ. «Իսկ եթէ մէկը Քրիստոսի մէջ է, նա նոր արարած է, որովհետեւ հինն անցաւ, և հիմա ամէն ինչ նոր եղաւ» (Բ Կորնթ. 5, 17): Օրինակ՝ եթէ մէկը հպարտ էր եւ յետոյ ապաշխարեց ու սիրեց խոնարհութիւնը, ապա նա ուրացաւ իր անձը: Եթէ մէկը նախանձոտ ու ռիսակալ էր եւ յետոյ ապաշխարելով դարձաւ եղբայրասէր, ապա նա ուրացաւ իր անձը: Եթէ մէկը բղջախոհ էր եւ յետոյ ապաշխարելով դարձաւ ժուժկալ, ապա ուրացաւ իր անձը: Եթէ արծաթասէրն ու ագահը գողանալով հարստութիւն չգիզեն կամ իրենց դիրքերից օգտուելով՝ ուրիշներին իրենց արդար վաստակից չզրկեն ու նախապէս իրենց թալանածը վերադարձնեն, ապա ճշմարտապէս

ուրացած կը լինեն իր անձը: Եթէ մէկը ծուլութիւնից ուղղուեց
 դէպի աշխատասիրութիւն, բարկութիւնից՝ զգաստութիւն, որկ-
 րամոլութիւնից՝ ժուժկալութիւն ու չափաւորութիւն, ապա նա
 ուրացաւ իր անձը: Եթէ մարդը չարահաւանութիւնից շրջուի դէ-
 պի սէր, յուսահատութիւնից՝ դէպի յոյս, թերահաւատութիւնից՝
 դէպի հաւատ, ապա նա ուրացաւ իր անձը: Թէեւ նա իր բնու-
 թեամբ նոյնն է մնում, սակայն նոյնը չէ մեղքի հանդէպ: Եւ այս-
 պէս հոգեկան ու մարմնաւոր բոլոր մեղքերը յաղթահարուած են
 իրենց հակադիր առաքինութիւններով: Հետեւաբար, մարդն այս-
 պէ՛ս է ուրանում իր անձը, երբ թողնում է այն ամէնը, ինչ կար
 հին մարդու մէջ, ու ձգտում է հոգեւոր նորոգութեան, ինչպէս
 Պօղոս առաքեալն է ասում. «Տանեցէ՛ք ձեր վրայից հին մարդուն իր
 գործերով եւ հազէ՛ք նորը, այն, որ նորոգուած է գիտութեամբ՝ ըստ իր
 Արարչի պարկերի» (Կող. 3, 9-10): Սողոսը մեռաւ՝ որպէս քրիստո-
 նեաներին հալածող ու դարձաւ Պօղոս՝ որպէս Քրիստոսի առա-
 քեալ ու նախանձախնդիր քարոզիչ, ինչպէս ինքն էր ասում.
 «Քրիստոսի հետ խաչը ելայ. կենդանի եւ այսուհետեւ, բայց ոչ թէ ես,
 այլ իմ մէջ ապրում է Քրիստոս: Իսկ հիմա, որ կենդանի եւ մարմնով,
 Աստուծոյ Որդւոյ հաւատով եւ ապրում, որ սիրեց ինձ եւ իրեն մահուան
 մարմնեց ինձ համար» (Գաղ. 2, 20): Նաեւ ասում էր. «Իսկ նրանք,
 որ քրիստոսեաններ են, խաչն են հանում իրենց մարմինները՝ կրքերով
 եւ ցանկութիւններով հանդերձ» (Գաղ. 5, 24):

Մեր կեանքի բոլոր ճանապարհներին զանազան խաչեր կան,
 որոնց հանդիպում ենք գրեթէ ամէն քայլափոխի՝ վշտեր, տառա-
 պանքներ, տագնապներ, դժբախտութիւններ, չարչարանքներ, հի-
 ւանդութիւններ, կորուստներ, մահեր, զանազան զրկանքներ ու
 հալածանքներ: Այս խաչերից չի ազատում ո՛չ հարստութիւնը,
 ո՛չ պաշտօնը, ո՛չ դիրքը, ո՛չ հանրայայտ լինելը եւ ո՛չ մի երկրա-
 յին մեծութիւն: Բայց ինչո՞ւ է իմ վիշտն աւելի դառը, իսկ ուրի-
 շինը՝ սակաւ: Ինչո՞ւ ես միշտ փորձանքների մէջ եմ ընկնում, իսկ
 ուրիշն ամէն ինչում լինում է յաջողակ: Ես տանջւում եմ վշտե-

րիս պատճառով, իսկ ուրիշն ուրախանում է բարեկեցութեան
 մէջ: Եթէ այս ամէնն ընդհանուր է, ապա ինչո՞ւ հաւասարաչափ
 չի բաժանուած: Ասեմ, թէ բոլորին էլ հաւասարաչափ է տրւում:
 Եթէ ուշադիր քննես քո ապրած կեանքը, ապա կը տեսնես, որ այ-
 սոր քեզ համար դժուար է, իսկ ուրիշի համար երէկ էր դժուար
 կամ էլ վաղը պիտի լինի դժուար: Ինչո՞ւ հետեւել օրերին կամ
 ժամերին: Եթէ նայենք ամբողջ կեանքի ընթացքին՝ սկզբից մին-
 չեւ վերջ, կը տեսնենք, թէ բոլորի համար էլ դժուար է: Արդեօք
 կա՞յ մէկը, որ ամբողջ կեանքի ընթացքում վիշտ ու ցաւ չունե-
 նայ: Գուցէ քեզ համար այսօր ծանր է քո լուծը, բայց արդեօ՞ք
 ուրախ եւ երջանիկ օրեր երբեւէ չես ապրել: Աստուած տայ որ
 կրկին տեսնես: Մեր կեանքը բնութեան պէս է. կան լուսաւոր ու
 խաւարամած օրեր: Եթէ ուշադիր քննենք ամէն բան, ապա կը
 տեսնենք, թէ այս աշխարհում ոչինչ պատահական չէ: Բայց մենք
 ունենք սիրող Հայր Աստուած, որի կամքը միշտ բարի է բոլոր
 մեր վշտերի ու նեղութիւնների մէջ: Մենք գիտենք, թէ «ամէն ինչ
 գործակից է լինում նրանց բարիքի համար, ովքեր սիրում են Աստուծոն,
 որոնք եւ կանչուեցին նրա նախասահմանումով» (Հռոմ. 8, 28): Տէրն
 ուզում է քեզ ազատել մեղքերից կամ առիթ է տալիս քեզ՝ ցոյց
 տալու քո համբերութիւնն ու հաւատարմութիւնն Իր հանդէպ,
 կամ էլ քեզանով ուզում է ցոյց տալ Իր գթութիւնն ու մարդասի-
 րութիւնը: Այս ամէնը դի՛ր քո վէրքերի վրայ ու ցաւի սոսկումը
 կը թողնես: Իսկ եթէ քո ցաւերի ու նեղութիւնների մէջ չտեսնես,
 թէ Աստուած ի՛նչ է ուզում քեզ պարգեւել քո իսկ վշտերի մէջ,
 սրտումդ յիշի՛ր, թէ ամէն ինչ, որ Աստուած է տալիս, բարեգոր-
 ծութիւն է, քանի որ Նա բարիքին գործակից է լինում: Ուստի
 համբերի՛ր եւ յուսով հաւատա՛: Վերջապէս, տառապանքներիդ
 ու վշտերիդ մէջ խոստովանի՛ր, թէ մեղաւոր մէկն ես, եւ ուրախա-
 ցի՛ր, որ վերջապէս եկաւ վշտի կրակը՝ այրելու քո մեղքերը: Մի՛
 նայիր այսօրուայ վշտիդ, այլ փոխադրուի՛ր ուրիշ կեանքի: Կա՛նգ
 առ մտքովդ Աստծու ահաւոր դատաստանի առաջ եւ այնտեղից

նայի՛ր քո վիշտը: Եթէ զգուժ ես, թէ պիտի դատապարտուես, ուրեմն ի՞նչ են քո բոլոր ներկայ վշտերն ու տառապանքները՝ համեմատած դատաստանի դատապարտութեան արդիւնքի հետ: Հետեւաբար, դու քեզ ասա. «Իմ մեղքերի պատճառով եմ ես հիմա տանջւում, եւ այսքանն էլ քիչ է ինձ»: Եւ փառք տո՛ւր Փրկչին, որ իր առատ մարդասիրութեամբ ու շնորհներով քեզ ապաշխարութեան է հրաւիրում: Ուստի համբերութեամբ խաչդ կրի՛ր եւ ամէն բան գոհունակութեամբ ու շնորհակալութեամբ ընդունի՛ր Աստծոց՝ որպէս հոգուդ բժշկութիւն եւ որպէս բանալի, որ բացում է երկնային թագաւորութեան դուռը: Ուրեմն, ամէն մէկս մեր խաչը կրելով՝ եկէք չվախենա՛նք, երբ վշտերն ու նեղութիւնները մեզ վրայ հասնեն, քանի որ երկնաւոր Հայրը մարգարէների շուրթերով մխիթարում է բոլոր իրեն յուսացողներին. «Մի՛ վախեցիր, որովհետեւ փրկեցի քեզ եւ կոչեցի քեզ քո անունով, թէ Իմն ես: Եթէ ջրերի միջով անցնես, քեզ հետ կը լինեմ, եւ գետերը քեզ չեն խեղդի. եթէ կրակի միջով անցնես՝ չես այրուի, եւ նրա բոցը քեզ չի կիզի. քանզի ես եմ քո Տէր Աստուածը՝ Իսրայէլի սուրբը, որ պիտի փրկեմ քեզ» (Ես. 43, 1-3):

Սբ. Յովհան Ոսկեբերանն ասում է. «Մեծագոյն հաճոյքով ես մշտապէս խօսում եմ այդ մասին, որպէսզի ոչ ոք, ով գտնւում է աղքատութեան մէջ, կամ ով կրում է ամէն տեսակի հիւանդութիւն ու սով, ինքն իրեն դժբախտ չհամարի, այլ ամէն անգամ համբերութեամբ եւ երախտագիտութեամբ սնուի բարի յոյսերով ու սպասի ապագայ անճառելի պարգեւներին եւ ողորմածութեանը՝ այն նեղութիւնների դիմաց, որոնց մենք բոլորս կ'արժանանանք մեր Տէր Յիսուս Քրիստոսի մարդասիրութեամբ»¹:

Քրիստոնէական տեսանկիւնից պատահականութիւններ չկան: Ամէն ինչ պայմանաւորութեամբ է, եւ Աստծու բոլոր նախախնամական գործողութիւնները որոշւում են իր ներքին

1 <https://lib.pravmir.ru/library/readbook/1102> (ստ 19/10/21):

Հոգեւոր վիճակից ելնելով: Այն ամէնը, ինչ ինձ հետ պատահում է, ես գիտեմ, որ ամենաօգտակարն ու լաւագոյնն է՝ յաւէրժութեան ու փրկութեան առումով: Գիտեմ, որ նոյնիսկ ամենավատ վիշտն աւելի օգտակար է ինձ համար: Երբեմն մարդուն շատ բարդ վիրահատութիւն է պէտք, եւ նա ոչ միայն գնում է այդ վիրահատական գործողութեանը, այլեւ տալիս է այն ամէնը, ինչ ունի, միայն թէ այդ գործողութիւնը կատարուի, որպէսզի չմահանայ: Բայց մենք գիտենք, որ բարեգութ Աստուած մարդասէր Բժիշկ է: Ես գիտեմ, որ ինձ հետ կատարւում է լաւագոյնը փրկութեան առումով, ուստի «սալն ինչ գործակից է լինում նրանց բարիքի համար, ովքեր սիրում են Աստուծուն, որոնք եւ կանչուեցին նրա նախասահմանում» (Հռոմ. 8, 28):

Անտոն Մեծն ասում է. «Մի՛ ասա՝ սա պատահաբար պատահեց, այլ սա հանդիպեց ինքնին: Դրանում չկայ ոչ մի խառնաշփոթ եւ անորոշ բան, չկայ ոչինչ ապարդիւն եւ պատահական: Մի՛ ասա՝ չար պատահականութիւն է կամ վատ ժամամակ: Սրանք տգէտ մարդկանց խօսքեր են. «Չէ՞ որ երկու ճնճողուկ մէկ դահեկանի է վաճառում, բայց նրանցից մէկն անգամ առանց ձեր Տօր գեպին չի ընկնում» (Մատթ. 10, 29): Որքա՞ն մազ կայ քո գլխին: Դրանցից ոչ մէկը չի մոռացւում Աստծու կողմից: Տեսնո՞ւմ ես, թէ ինչպէս ոչինչ, նոյնիսկ ամենափոքրը չի խուսափում Աստծու ամենատեսաչքի հսկողութիւնից: Պատահական ոչինչ չկայ: Ամէն բան կատարւում է Աստծու նախախնամութեամբ, կանխագիտութեամբ եւ իր թոյլտուութեամբ»¹:

Մենք տեսնում ենք աղքատներին եւ հիւանդներին, որոնք տանջւում են եւ տառապում: Մեր կեանքում մէկ հարուածին յաջորդում է միւսը: Յարուած եւ ամբողջական անյուսուցիւն: Շատերս խորհում ենք. «Բա ինչպէ՞ս, այդքան լաւ մարդ է, ամէն ինչ իր գլխին եկաւ: Ինչպէ՞ս հասկանալ դա»: Եւ իր

1 https://azbyka.ru/otechnik/Vasilij_Velikij/simfoniya-po-tvorenijam-svjatitelja-vasilija-velikogo/29 (ստ 20/10/21):

կողքին տեսնում ենք մէկ այլ մարդու, ով ապրում է բարեկեցիկ, աշխարհիկ եւ մեղսալի կեանքով: Աստուած գոյութիւն չունի նրա համար: Ոչ էլ զգում է Աստուծո գոյութիւնը: Նա առողջ է, ապրում է երկար տարիներ եւ հասնում խոր ծերութեան: Բայց ի՞նչ կը լինի նրա հետ: Նա գործում է անօրէնութիւն, ապրում է Աստուծոց հեռու, ու նրա հետ ամէն ինչ կարգին է: Մարդիկ զարմանում են եւ ասում. «Ինչպէ՞ս կարելի է բացատրել այս ամէնը, ինչպիսի՞ Աստուած է Նա եւ ինչպէ՞ս կարող է թոյլ տալ այս ամէնը: Սակայն մարդասէր Աստուած չի արհամարհում մարդուն եւ նրա ամենափոքր կարիքը: Մեր կեանքում բացարձակապէս ոչինչ չկայ, որ չվերաբերի Աստծուն: Սբ. Եփրեմ Ասորին ասում է. «Բոլոր պատահած բաներն ընդունեցէ՛ք որպէս բարիք՝ լաւ իմանալով, որ առանց Աստծու ոչինչ չի պատահում», նաեւ՝ «Զկայ մարդ, ով Նրա նախախնամութեան տակ չէ»¹:

Պատմում են, թէ մի անգամ Անտոն Մեծը, տարակուսած լինելով Աստծու տնօրէնութեան խորիմաստութիւնից եւ Աստծու դատաստաններից, աղօթում էր. «Տէ՛ր, ինչո՞ւ մարդկանցից ոմանք ծերութեան եւ թուլութեան վիճակին են հասնում, իսկ միւսները՝ մահանում են մանկութեան տարիքում ու քիչ ապրում: Ինչո՞ւ են ոմանք աղքատ, իսկ միւսները՝ հարուստ: Ինչո՞ւ են բռնակալներն ու հարագործները բարգաւաճում՝ առատօրէն վայելելով երկրային բարիքները, իսկ արդարները տառապում են դժբախտութիւնների եւ աղքատութեան պատճառով»: Նա երկար ժամանակ այդպէս մտածում էր, եւ յանկարծ մի ձայն լսեց. «Անտո՛ն, անձիդ համար ուշադիր եղի՛ր եւ մի՛ քննիր Աստծու դատաստանները, քանի որ դա հոգեվնաս է»²:

Սբ. Իգնատիոս Բրեանչանինովն ասում է. «Երբ վշտերը վրայ հասնեն ինքնաբերաբար, մի՛ վախեցի՛ր դրանցից, մի՛ կարծիր, թէ

1 <https://svyatye.com/citata/Efrem-Sirin-O-Promysle-Bozhiem/19183.html> (սւն 20/10/21):

2 <http://www.pravoslavie.ru/answers/070531150310.htm> (սւն 20/10/21):

դրանք պատահականորեն վրայ եկան: Ո՛չ, դրանք թոյլատրւում են Աստծու անհասկանալի նախախնամութեամբ»¹: Աստծու նախախնամութիւնն այն է, երբ Տէր Աստուած Իր ողջ իմաստութիւնն օգտագործում է՝ դեւերի եւ մարդկանց չար մտադրութիւնները միասին հաւաքելու եւ կրակով կրակը մարելու համար՝ ի վերջոյ, ամէն ինչ բերում է բարի եւ օգտակար նպատակի: Սա այն է, ինչ մենք անուանում ենք Աստծու նախախնամութիւն, այսինքն՝ ազգերի, մարդկանց եւ անհատական կեանքի՝ դէպի լաւ նպատակ առաջնորդութեան նախօրօք կանխատեսութիւնը պատմութեան միջոցով:

Մի ճգնաւոր ծերունի անընդհատ մտածում էր, թէ ինչո՛ւ են չարագործները բարգաւաճում, իսկ բարեպաշտները՝ մահանում աղքատութեան եւ հիւանդութեան մէջ: Աստծուց նա խնդրում էր պարզաբանել նախախնամութեան ուղիները: Սակայն Աստուած նրան չէր յայտնում այն, ինչ նա ուզում էր իմանալ: Ճգնաւորը չէր դադարում աղօթել, եւ, վերջապէս, Տէրը նրան հասկացրեց: Մի անգամ նա պէտք է շատ երկար ճանապարհ անցներ, եւ նրան միացաւ մի վանական ուղեկից, ով ամբողջ ճանապարհորդութեան ընթացքում տարօրինակ գործեր էր կատարում: Առաջին գիշերը նրանք անցկացրին մի բարեպաշտ մարդու տանը: Տանուտէրը հիւրընկալեց նրանց այնպիսի պատուով, որ նոյնիսկ նրանց կերակուր էր մատուցում արծաթէ ամանով: Վանականը սեփականատիրոջից գողացաւ արծաթէ ամանը եւ ապա նետեց ծովը: Ճգնաւոր ծերունին զարմացաւ, բայց ոչինչ չասաց: Նրանք շարունակեցին ճանապարհորդութիւնը եւ յաջորդ օրը նոյնպէս գիշերեցին մի բարեպաշտ մարդու տանը: Սա եւս նրանց ուրախութեամբ ընդունեց, լուաց ոտքերը ու մեծ ուշադրութեամբ պատուեց նրանց: Բայց երբ ճգնաւորն ու իր ուղեկիցը միասին սկսեցին հաւաքուել՝ ճանապարհ գնալու,

1 <https://svyatye.com/citata/Ignatii-Brianchaninov-O-skorbi/26324.html>
(սոս 20/10/21):

տանուտէրը նրանց մօտ բերեց իր երիտասարդ որդուն, որպէսզի օրհնութիւն ստանայ նրանցից: Նա իր որդուն ուղարկեց իր հիւրերին ուղեկցելու համար: Նրանք ճանապարհ ընկան, սակայն տարօրինակ վանականն այս երիտասարդին նետեց հոսող գետը, եւ նա խեղդուեց: Ճգնաւորը եւ յուսահատուած հայրը սարսափից չէին կարողանում որեւէ բառ ասել: Այնուհետեւ ճամփորդները կանգ առան անապատ մի վայրում, որտեղ գտնուում էր մի խարխուլ ու քայքայուած տուն, եւ գիշերեցին այդ տան ապաստարանում: Առաւօտեան տարօրինակ վանականը կոտորեց տան պատերը՝ այն ամբողջովին փլուզելով: Քանդելով տունը՝ նա սկսեց նորից կառուցել այն: Ճգնաւորը չկարողացաւ դիմանալ վանականի այդ արարքներին ու զայրացած բացականչեց. «Ո՞վ ես դու, դու մա՞րդ ես, թէ՞ դեւ ես: Ինչո՞ւ էիր չարութիւն անում ամբողջ ճանապարհի ընթացքում: Ձէ՞ որ այն մարդը մեծ սիրով ընդունեց մեզ, բայց դու նրանից արծաթէ ամանը գողացար, միւսն ուղարկեց իր որդուն, որ մեզ ուղեկցի, իսկ դու նրան խեղդեցիր գետում: Հիմա էլ մենք այստեղ գիշերեցինք, բայց դու այս տունն էլ քանդեցիր: Այդ ի՞նչ դժոխային դեւ ես դու»: Իսկ այս տարօրինակ ճամփորդը պատասխանում էր. «Ես մարդ կամ դեւ չեմ: Ես Աստծու հրեշտակն եմ, որ քեզ համար եմ ուղարկուել, որպէսզի գոնէ մասամբ սովորեցնեմ քեզ՝ հասկանալու Աստծու նախախնամութեան ուղիները: Մի՛ զարմացիր այս ամէնի համար եւ մի՛ գայթակղուիր ինձանով, այլ լսի՛ր, թէ ի՞նչ պիտի ասեմ քեզ: Առաջին մարդը, ով ընդունեց մեզ, իրօք, աստուածահաճոյ էր ու բարի, բայց իմ կողմից գետը նետուած այդ արծաթէ ամանը նա ձեռք էր բերել անիրաւ ձեւով ու չէր կարող հրաժարուել դրանից: Ես նրան զրկեցի այդ կապանքից, որպէսզի նրա սիրտը չկապուի գողացուածին: Հետեւաբար, ես այն նետեցի գետը, որպէսզի դրա միջոցով նա չոչնչացնի իր վարձատրութիւնը: Երկրորդ մարդը նոյնպէս հաճելի էր Աստծուն, բայց եթէ նրա փոքր որդին մեծանար, մի սարսափելի չարագործ պիտի դառնար

եւ կործաներ ոչ միայն իր սեփական հոգին, այլեւ իր հօր կեանքը: Ուստի ես նրա հոգին վերցրի իր հօր բարօրութեան համար, որպէսզի նա փրկուի: Հետեւաբար, մինչ նա դեռ գտնուում էր յաւերժութեան համար յարմար վիճակում, Տէրը հրամայեց ինձ ընդհատել նրա կեանքը: Միւս տանուտէրն անբարոյ մարդ էր եւ այդ պատճառով աղքատացաւ ու թաքնուեց: Նրա պապը, տուն կառուցելով, պատի մէջ ոսկի էր թաքցրել: Ոմանք գիտէին դրա մասին: Ուստի ես տունն այնպէս աւերեցի, որ այսուհետ ոչ ոք այնտեղ ոսկի չփնտռի, եւ դա չգառնայ մահուան պատճառ: Այդ տունը, փաստօրէն, եթէ մի քիչ էլ մնար, պիտի փլուզուէր, իսկ յաջորդ գիշերն այնտեղ մի քանի հոգի պէտք է մնային, որոնք պիտի մահանային տան փլատակների տակ: Այժմ վերադարձի՛ր քո խուցը, մի՛ քննիր Աստծու դատաստաններն ու մի՛ ասա «ինչո՞ւ», քանի որ «անքննելի են նրա դատաստանները, եւ անգննելի՝ նրա ճանապարհները» (Հռոմ. 11, 33): «Որովհետեւ Նրա դատաստանները ճշմարիտ եւ արդար են» (Յայտ. 19, 2): Ուստի, մի՛ քննիր Աստծու դատաստանները. դա քեզ չի օգնի»: Այնուհետեւ հրեշտակն անտեսանելի դարձաւ, իսկ զարմացած ճգնաւորը զղջաց իր սխալի համար ու դրանից յետոյ բոլորին պատմում էր, թէ ի՛նչ էր պատահել իր հետ:

Մեզ յաճախ հարկաւոր է արդար Յոբի փորձը, որպէսզի մարդկային մտքի ուժով եւ միջոցներով չփնտռենք բացատրութիւններ այն բանի համար, ինչը կարելի է հասկանալ միայն Աստծու հետ հաղորդակցութեան միջոցով: Յիշե՛նք այն պահը, երբ Յոբը շփոթուած էր, քանի որ չէր կարողանում հասկանալ, թէ ինչո՞ւ է Տէրը տառապանք ուղարկել իրեն: Նա չի անհանգստանում իր հետ պատահածի համար, նրան չի անհանգստացնում տառապանքների արտաքին վիճակը, նրան տանջում է այն թիւրիմացութիւնը, թէ իր կեաքում ի՞նչն էր այդքան տհաճ Աստծու համար: Ո՛չ ընկերների բացատրութիւնը, ո՛չ էլ նրա սեփական մտքերը չեն կարող նրան տալ այս հարցի

պատասխանը: Ու միայն այն ժամանակ, երբ Տէրը յայտնուում է նրան, Ինքն է դառնում նրա համար բոլոր հարցերի պատասխանը, եւ կատարւում է հէնց այն, ինչն արդէն իսկ արտայայտուած է Նոր կտակարանում Փրկչի խօսքերով. «Եւ այն օրն ինն ոչինչ պիտի չհարցնէք» (Յովհ. 16, 23): Հաւանաբար, Աստծու հետ անմիջական հաղորդակցութեան կամ այդպիսի փորձառութեան բացակայութիւնը, որոնք արտայայտուում են աղօթքի եւ եկեղեցական արարողութիւններին մասնակցելու ընթացքում, չեն թողնում մեզ լիովին վստահել Աստծու նախախնամութեանը եւ ամբողջովին յանձնուել դրան:

Եփրեմ Ասորին ասում է. «Ամէն բան Աստծուց է՝ ե՛ւ բարին, ե՛ւ ցաւալին, ե՛ւ անարժանը, բայց մէկը՝ բարի կամեցողութեամբ է, միւսը՝ տնօրինութեամբ, իսկ երրորդը՝ թոյլտուութեամբ: Բարի կամեցողութեամբ է, երբ մենք ապրում ենք բարեպաշտութեամբ, քանզի Աստծուն հաճելի է, որպէսզի մենք անմեղ կեանք վարենք, առաքինի ու բարեպաշտ կեանքով ապրենք: Տնօրինութեամբ է, երբ սխալների մէջ ընկնելով եւ մեղք գործելով՝ սովորում ենք ողջամտութիւն: Իսկ թոյլտուութեամբ է, երբ այս ամէնը հասկանալով՝ դարձի չենք գալիս»¹:

Սբ. Յովնան Ոսկեբերան հայրապետն ասում է. «Մենք միայն մէկ բանում պէտք է համոզուած լինենք, որ Աստծու կողմից ամէն ինչ ուղարկւում է մեր օգտի համար, իսկ թէ ինչ ձեւով՝ պէտք չէ քննել, պէտք չէ բողոքել եւ պէտք չէ յուսահատուել, երբ չգիտենք այն»²: Նաեւ ասում է. «Աստուած թոյլ չի տալիս, որ մարդիկ մշտապէս դժբախտութիւնների մէջ մնան, որպէսզի չընկնեն յուսահատութեան մէջ, ոչ էլ հանգստութեան մէջ մնան, որպէսզի անհոգ չդառնան, այլ տարբեր կերպերով է կազմակերպում նրանց

1 <https://pravoslavie.ru/69687.html> (սոս 20/10/21):

2 <https://svyatye.com/citata/Ioann-Zlatoust-O-Promysle-Bozhiem/2213.html> (սոս 20/10/21):

փրկուլթիւնը՝ փոխելով մէկը միւսով»¹: Հետեւաբար, ինչ էլ որ լինի մեր կեանքում, միշտ յիշե՛նք, որ պատահական ոչինչ չկայ: Աստծու դատաստանները ճշմարիտ եւ արդար են (Յայտ. 19, 2):

Աստուածաշնչում յիշատակում են վերջին օրերի պատուհասներին մասին՝ արեւի, լուսնի եւ աստղերի բնական նշանները, որոնք ուղեկցում են ազգերի տագնապով: Այնուհետեւ ի ցոյց են դրւում մահուան սարսափի սպասման ազդեցութիւնը եւ ապագայի վերաբերեալ լիակատար անորոշութիւնը. «Եւ նշաններ պիտի լինեն արեգակի, լուսնի եւ աստղերի վրայ: Եւ երկրի վրայ պիտի լինի հեթանոսների տագնապ, աշխարհի վրայ գայիք պատահարների վախից եւ նախազգացումից մարդիկ պիտի մեռնեն, որովհետեւ երկնքի գորութիւնները պիտի շարժուեն» (Ղուկ. 21, 25-26):

Հակաքրիստոսի գալուստը վերջին նշանն է. «Որդեակնե՛ր, վերջին ժամանակն է: Եւ ինչպէս լսել էք, Նեոր գալու է. բայց արդէն իսկ եկել են բազում նեորք. դրանից էլ կարող ենք իմանալ, որ վերջին ժամանակն է» (Ա Յովհ. 2:18): Անհաւատների համար զժուար է հաւատալ, որ մենք ապրում ենք երկրային պատմութեան վերջին ժամանակներում: Աստուածաշունչն ասում է. «Բայց նախ այս բանն իմացե՛ք, որ վերջին օրերին պիտի գան արեամարեոդներ, ծաղրողներ, որոնք պիտի ընթանան ըստ իրենց ցանկութիւնների: Եւ պիտի ասեն. «Ո՛ր է նրա գալարեան խոստումը, քանի որ նախահայրերի ննջելուց յետոյ ամէն ինչ այն նոյն ձևով է մնում, ինչպէս էր արարչագործութեան սկզբից» (Բ Պետր. 3, 3-4):

Եթէ անհաւատների ու անբարիշտների համար մօտենում է վերջը, աղէտը, ապա արդարների համար մօտենում է իրենց փրկութիւնը: Մօտ է նաեւ Քրիստոսի գալուստը: Երջանիկ են այն մարդիկ, որոնք քրիստոնեայ են կոչւում: Քրիստոնեաները գիտեն Աւետարանը, գիտեն՝ ինչպէ՛ս պաշտպանուել յուսալքափութիւնից, կրքերից եւ մնացած բոլոր ախտերից: Աշխարհի

1 <https://svyatye.com/citata/Ioann-Zlatoust-O-Promysle-Bozhiem/23156.html>
(սոս 20/10/21):

վրայ գալիք պատահարների, հարուածների, տառապանքների վախից մարդիկ պիտի տաքնապեն:

Մարդկային հոգին այժմ հիւանդ է, երբ կրքերը տարածւում են, իսկ մարդիկ վարակւում են այդ կրքերով եւ խտերով: Ինչպէ՞ս չյուսահատուել: Հոգին հալածւում է այն երեւոյթներով, որոնք գերակշռում են ժամանակակից աշխարհում՝ անբարոյականութիւն, նիւթապաշտութիւն, աթէիզմ, նէոհեթանոսութիւն, դիւական միստիցիզմ, սատանայապաշտութեան զարգացում:

Ամէն օր աշխարհն անցնում է նոր, աւելի մեծ ու բազմատեսակ աղէտների եւ անսպասելի դէպքերի ու չնախատեսուած հարուածների միջով: Այս բոլոր իրադարձութիւնները կատարւում են այսօր: Բայց կարեւորն այն է, թէ ի՞նչ է կատարւում մեր ներսում: Մենք չենք մոլորուի ու կը զօրանանք միայն այն ժամանակ, երբ Քրիստոսի աչքերով նայենք ամէն ինչին: Տէրը մեզ խոստացաւ, որ մենք երբէք մենակ չենք մնայ այս փորձութիւնների մէջ: Եւ որքան աւելի շատ է վիշտն ու տառապանքը, այնքան Տէրն աւելի մօտ է մեզ:

Քրիստոս ասում է. «Պիտի լինի հեթանոսների քրտնաւառաշխարհի վրայ գալիք պապահարսների վախից եւ նախազգացումից» (Ղուկ. 21, 25): Ի՞նչ պէտք է անեն մարդիկ, երբ տեսնում են, որ այս ամէնը կատարւում է իրենց շուրջը: «Արթո՛ւն կացւի այսուհետեւ, ամէն ժամ աղօթք արւիք, որպէսզի կարողանաք զերծ մնալ այն ամէնից, որ լինելու է, եւ արժանի լինէք կանգնելու մարդու Որդու առաջ» (Ղուկ. 21, 36): Սա Քրիստոսի պատուիրանն է իր բոլոր աշակերտներին: Բոլոր ժամանակներում մենք պէտք է զգոյշ լինենք: Մենք պէտք է աղօթենք՝ ոչ միայն խոսափելու ապագայ բոլոր աղէտներից, այլեւ որպէսզի «արժանի լինենք կանգնելու մարդու Որդու առաջ»:

Նա, ով գալու է, ազատելու է մեզ վախից: Նրա շնորհիւ մենք սովորում ենք, որ ունենք ապագայ, բայց որպէսզի այդ ապագան մերը լինի, մենք պէտք է արթուն մնանք ամէն ժամանակ: Այս արթնութիւնը քաջութիւն եւ վճռականութիւն է պահանջում

աշխարհի բոլոր մեղքերի դէմ պայքարելու հարցում:

Կեանքի աննախադէպ քայքայումը կարեւոր նշան է մեծ իրադարձութեան. «Եւ այն ժամանակ պիտի տեսնեն մարդու Որդուն՝ եկած ամսկերի վրայով, զօրութեամբ եւ մեծ վատրով: Եւ երբ սկսուի այս բանը լինել, վե՛ր կացէք եւ ձեր գլուխները բարձրացրէ՛ք, որովհետեւ մօտ է ձեր փրկութիւնը»: Վշտերից, նեղութիւններից, փորձութիւններից, հալածանքներից, տառապանքներից ու վերջապէս մահից չվախենալու միակ ճանապարհը Քրիստոսին սիրելն է: «Կարարեալ սիրոյ մէջ վախ չկայ: Կարարեալ սէրը հեռու է վախում երկիւղը» (Ա. Յովհ. 3, 18):

Անկախ նրանից, թէ ի՛նչ է կատարւում աշխարհում, Աստծու Որդու հետ մեզ համար դա չի կարող սարսափելի լինել: Ճմարտութիւնը յորդորում է իր ընտրեալներին եւ ուղղակիօրէն ասում, որ երբ աշխարհի աղէտները բազմանում են, երբ շարժւում են երկնքի զօրութիւնները, եւ յայտնւում է ահաւոր Դատաւորը, ապա «ձեր գլուխները բարձրացրէ՛ք» եւ ուրախացէ՛ք, որովհետեւ երբ աւարտւում է աշխարհը, որը դուք չէք սիրել, մօտենում է քաւութիւնը: Աստծուն սիրողներին հրամայուած է ուրախանալ ու զուարճանալ աշխարհի վերջի համար, որովհետեւ նրանք անմիջապէս ըմբոշխնելու են Նրան, ում սիրում են: Հաւատարիմ մարդը, ով ցանկանում է տեսնել Աստծուն, անհնար է, որ սգայ այս աշխարհի տագնապններից ու ցնցումներից՝ իմանալով, որ նոյնիսկ կարող է մեռնել յանկարծակի վրայ եկած հիւանդութիւնից կամ պատուհասներից:

Բայց «ինչպէ՞ս կարող եմ ես ուրախ լինել»: Պօղոս առաքեալը մեզ ասում է. «Ուրախ եղէք միշտ, անդադար աղօթեցէ՛ք, ամէն ինչում գոհութիւն մարտցեցէ՛ք, որովհետեւ դա՛ է Կարծու կամքը ձեզ համար ի Քրիստոս Յիսուս» (Ա. Թես. 5, 16-18): Նա չասաց՝ ուրախ եղէք, երբ լաւ էք, անդադար աղօթեցէ՛ք, երբ ժամանակ ունենաք. եւ ամէն ինչում գոհութիւն մատուցէ՛ք, երբ ամէն ինչ լաւ է ընթանում: Ո՛չ, մենք պէտք է մեր մէջ ուրախութիւն ունենանք յատկապէս

այս տխուր օրերին, կիսուենք միմեանց հետ, անդադար աղօթենք
եւ ամէն ինչի համար շնորհակալութիւն յայտնենք Աստծուն:

Ամենախնամ Տէրը թող հովանի լինի մեզ, պահպանի ու
սատարի աշխարհական բոլոր փորձութիւնների, տաճնապների
ու ցնցումների մէջ, որպէսզի երբ մեր հաշուետուութեան ներ-
կայացնելու ժամը գայ, արժանի լինենք կանգնել Ամենասուրբ
Նրբորդութեան առջեւ, գովել ու օրհնաբանել Նրան՝ այժմ, միշտ
եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:



ԵՐԱՆՆԼԻ ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵՔԵՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՕՍՔԸ¹

Բայց ի՞նչ օգուտ կայ, ասում ես դու, երբ թէ՛ երկինքը, թէ՛ արեւը, թէ՛ լուսինը, թէ՛ աստղերի համախմբումը եւ թէ՛ միւս բոլոր արարածները գտնւում են մեծագոյն կարգաւորութեան մէջ, իսկ մեր գործերն անկարգութեան ու խռովքի մէջ են: Այդ ինչպիսի՞ անկարգութեան ու խռովքի մէջ է մարդ արարածը: Դու ասում ես՝ ինչո՞ւ է հարուստը նեղութիւն պատճառում, կողոպտում եւ ամէն օր գինու համար շռայլում աղքատների ունեցուածքը, սակայն եւ իրեն ոչ մի չարիք չի պատահում: Իսկ ով, որ ապրում է համեստ եւ իր անձը զարդարում չափաւորութեամբ, արդարութեամբ ու բազում առաքինութիւններով, կրում է աղքատութիւն, հիւանդութիւններ եւ ընկնում է ծայրագոյն փորձանքների մէջ: Սա՞ է, որ քեզ գայթակղեցնում է: «Սա է», - ասում ես դու: Ուրեմն ինչո՞ւ, երբ դու տեսնում ես, թէ կողոպտիչներից շատերն ընկնում են փորձանքների մէջ, իսկ բարեպաշտներից ոմանք կամ շատերը վայելում են երանութիւն, այդպէս չես խորհում ու չես փառաբանում Աստծուն: Որովհետեւ ճիշտ սա՛ է, որ աւելի է գայթակղեցնում ինձ. ինչո՞ւ երկու չարագործներից մէկը պատժւում է, իսկ միւսը մեռնում է անպատիժ. եւ ինչո՞ւ երկու բարեպաշտներից մէկը վարձատրւում է արժանիքներով, իսկ միւսն իր ամբողջ կեանքի ընթացքում չարունակ տառապում է: Եւ ճիշտ սրա՛ մէջ է Աստծու մեծագոյն նախախնամութեան տնօրինութիւնը: Եթէ Նա բոլոր չարագործներին այստեղ պատժէր ու բոլոր բարեպաշտներին պարգեւատրէր, ապա զուր պիտի լինէր Դատաստանի օրը: Դարձեալ, եթէ երբեւէ ոչ մի չարագործի չպատժէր եւ ոչ մի

1 Սբ. Յովհան Ոսկեբերան, «Քարոզներ դեւերի զօրութիւնների մասին», Քարոզ Առաջին, (թարգմ. Գեորգ սրկ. Գեորգեան):

բարեպաշտի չպարգեւատրէր, ապա այն ժամանակ արատաւորներն առաւել պիղծ ու վատ պիտի լինէին, քանի որ նրանք բարի մարդկանցից աւելի հակուածութիւն ունեն անհոգութեան: Չարախօսներն առաւել եւս մեղադրում էին Աստծուն եւ ասում, թէ մեր գործերը լիովին մնում են առանց Աստծու նախախնամութեան: Բայց եթէ այժմ էլ ամբարիշտներից ոմանք պատժուում են, իսկ բարեպաշտները պարգեւատրւում, ապա ասում են, թէ մարդկային գործերը չեն կառավարւում Աստծու նախախնամութեամբ, ուրեմն, եթէ երբեւէ սա էլ չլինէր, ինչե՞ր պիտի ասէին աստուածանարգները. ինչպիսի՞ խօսքեր պիտի փսխէին: Ահա՛ թէ ինչու Աստուած պատժում է չար մարդկանցից ոմանց, իսկ ոմանց էլ չի պատժում: Նաեւ բարեպաշտներից ոմանց պարգեւատրւում է, իսկ ոմանց էլ չի պարգեւատրւում: Նա բոլորին չի պատժում, որպէսզի քեզ հաւատացնի, թէ գոյութիւն ունի Յարութիւն: Ոմանց պատժում է, որպէսզի անհոգներին աւելի խոհեմ դարձնի՝ նրանց մէջ գրգռելով վախն ուրիշների պատժով: Ու բարեպաշտներից ոմանց պարգեւատրւում է, որպէսզի այդ պարգեւներով ուրիշներին դրդի բարեպաշտութեան եւ առաքինութեան նախանձախնդրութեան: Սակայն չի պարգեւատրւում բոլորին, որպէսզի դու իմանաս, թէ կայ ուրիշ ժամանակ, երբ բոլորին պարգեւներ են տրուելու: Եթէ բոլորն այստեղ ըստ արժանիքների վարձատրութիւն ստանային, այն ժամանակ չէին հաւատայ Յարութեան վարդապետութեանը, իսկ եթէ ոչ ոք չստանար ըստ արժանիքի, շատ շատեր աւելի անհոգ էին դառնալու: Սրա համար Աստուած ոմանց պատժում է, ոմանց չի պատժում եւ այսպիսով բարիք է անում թէ՛ պատժողներին եւ թէ՛ չպատժողներին: Այսպիսով, ոմանց մէջ Նա ոչնչացնում է արատը, իսկ ուրիշներին առաջինների պատժով աւելի բարի եւ խոհեմ է դարձնում: Իսկ այս ամէնը երեւում է այն բանից, որ ասաց Ինքը՝ Քրիստոս, երբ Իրեն պատմեցին, թէ ընկած (Սելովամի) աշտարակը մի քանի մարդ

մեռցրեց: Նա հրէաներին է դիմում՝ հարցնելով. «Կարծո՞ւմ էք թէ միայն նրանք, ովքեր այդպիսի պատահարների ենթարկուեցին, աւելի մեղաւոր էին»: Յիսուս պատասխանեց նրանց եւ ասաց. «Ո՛հ, ասում եմ ձեզ, սակայն, եթէ չսպառիսարէք, ամէնը էլ նոյնպէս պիտի կորչէք» (Ղուկ. 13, 2-3): Տեսնո՞ւմ ես, թէ նրանք մեռան մեղքի պատճառով, իսկ միւսները փրկուեցին ոչ թէ իրենց արդարութեան համար, այլ այն բանի համար, որ նրանց պատժի չնորհիւ աւելի լաւը դարձան: Ուրեմն, ասում ես դու, պատժուածներին վիրաւորանք է հասցուած, քանի որ նրանք էլ, պատժուած չլինելով, կարող էին ուրիշների պատժով աւելի լաւ լինել: Բայց Աստուած, եթէ իմանար, որ նրանք ապաշխարելով կ'ուղղուէին, չէր պատժի նրանց, որովհետեւ, Նա եթէ կանխատեսէր, թէ շատերը չեն օգտուում իր երկայնամիտ համբերատարութիւնից ու մեծ ներողամտութիւնից, այնուամենայնիւ, համբերում է՝ իր կամքը կատարելով ու նրանց հնարաւորութիւն տալով ետ քաշուել իրենց խենթութիւնից, ուստի ինչպէ՞ս նա կարող է զրկել ապաշխարութեան պտուղներից նրանց, ովքեր կարող են ուղղուել ուրիշների պատժով: Հետեւաբար, այս մարդկանց հասցուած չէ վիրաւորանք, քանի որ այդ արատը շուտով չքանում է պատժով: Այնտեղի տանջանքներն իրենց համար թեթեւ կը լինեն այն պատճառով, որ արդէն այստեղ չարչարուեցին: Նաեւ չպատժուողները չկրեցին վիրաւորանք, քանի որ նրանք, եթէ կամենային, կարող էին իրենց անձերն ուղղելու համար օգտուել Աստծու համբերատարութիւնից ու զարմանալով [Տիրոջ] անոխակալութեան վրայ՝ ակնածալից լինել Նրա անսահման ներողամտութեանը եւ որեւէ ժամանակ առաքինի վարք դրսեւորել եւ ուրիշների պատիժները սեփական փրկութեամբ փոխարինել: Իսկ եթէ նրանք չարութեան մէջ այդպէս էլ մնան, դրա պատճառն Աստուած չէ, որ երկայնամտօրէն համբերում է, որպէսզի շահի նրանց՝ դէպի իրեն դարձնելով: Բայց նրանք արժանի չեն ներման, որովհե-

տեւ չօգտուեցին երկայնամիտ Աստծու համբերութիւնից, ինչպէս հարկ է: Բայց կարելի է ցոյց տալ ոչ միայն այն պատճառը, թէ ինչո՞ւ ոչ բոլոր չարագործներն են այստեղ պատժուած: Կայ ուրիշ՝ ոչ պակաս կարեւոր մի պատճառ: Եթէ Աստուած բոլորին անմիջապէս պատժէր յանցանք գործելուց յետոյ, մարդկային ցեղն արդէն վաղ ժամանակից բնաջինջ եղած կը լինէր ու չէր կարողանայ իր գոյութիւնը պահպանել: Եւ որպէսզի դու ունենաս այն համոզումը, թէ սա ճշմարտութիւն է, լսի՛ր, թէ ի՞նչ է ասում մարգարէն. «Եթէ անօրէնութիւններս քննես, Տէ՛ր, ո՞վ կարող է կանգնել քո առջեւ, Տէ՛ր, քանզի քեզից է զալիս քառութիւնը» (Սաղմ. 129, 3-4): Իսկ եթէ կամենաս նաեւ քննել այս ասուածի զօրութիւնը, ճշտօրէն քննութեան չենթարկելով ամէն մէկի կեանքը (քանի որ անհնար է մեզ իմանալ, թէ իւրաքանչիւրն ի՞նչ է արել իր կեանքի ընթացքում), նշենք, թէ ինչպէ՛ս մենք բոլորս անառարկելի մեղք ենք գործում եւ սրանից պարզորոշ երեւում է, որ եթէ մենք ամէն մի մեղքի համար պատժուէինք, ապա վաղուց կործանուած պիտի լինէինք: Նա, ով իր եղբօրը «յիմար» է ասում, «Անթակայ կը լինի գեհեմի կրակին»,~ ասում է Աւետարանը (Մատթ. 5, 22): Մեզանից ո՞վ մեղաւոր չէ՞ այս մեղքը գործելով: Ուրեմն ի՞նչ. այն ժամանակ ամէն մի մեղաւորի հարկ պիտի լինէր անմիջապէս ոչնչացնե՞լ: Բայց այսպիսով մենք բոլորս շատ վաղուց կործանուած ու բնաջինջ եղած կը լինէինք: Դարձեալ, երգում տուողի համար ասուում է, թէ նա, եթէ նոյնիսկ սուտ երգում չտայ, միեւնոյն է, սխալ գործ է անում (Մատթ. 5, 33): Իսկ ո՞վ երգում չի տուել: Աւելին, ո՞վ երբեւէ չի դրժել իր երգումը: Նա, ով կնոջը նայում է նրան ցանկանալու համար, ըստ Աւետարանի, իրական շնացող է (Մատթ. 5, 28): Եւ այս մեղքի մէջ շատերն են գտնուում: Եթէ յայտնի մեղքերն այսպէս մեծ եւ անհանդուրժելի են լինում, եւ իւրաքանչիւր մեղք մեզ անխուսափելի պատիժ է բերում, ուրեմն երբ մենք մտածենք նաեւ մեր ծածուկ գործած մեղքերի

մասին, այն ժամանակ իւրայատուկ կերպով կը ճանաչենք Աստծու նախախնամութիւնը, որ մեզ պատիժ չի ուղարկում մեր գործած ամէն մի մեղքի համար: Հետեւաբար, երբ տեսնես, որ մէկը կողոպտում է եւ անարդար կերպով հարստանում ու սրա համար չի պատժուում, դու էլ արթնացրո՛ւ քո խղճմտանքը, քննի՛ր քո կեանքի ընթացքը, զննի՛ր մեղքերդ ու լաւ կ'իմանաս, որ քեզ ձեռնտու չէ պատժուել գործած ամէն մի մեղքիդ համար: Սրա համար է, որ շատերն անխոհեմ ու յանդգնաբար են արտայայտուում, որովհետեւ չեն անդրադառնում իրենց մեղքերին՝ նախքան ուրիշներինը, ու թողնելով անձնական մեղքերը՝ մենք բոլորս զբաղուում ենք ուրիշների մեղքերով: Սակայն այսուհետեւ այսպէս չվարուե՛նք, այլ անե՛նք հակառակը: Եւ եթէ տեսնես, թէ արդարը պատժուում է, յիշի՛ր Յոբին: Որքա՛ն էլ մէկն արդար լինի, միեւնոյն է, չի կարող Յոբից աւելի արդար լինել, եթէ նոյնիսկ բազում փորձանքների մէջ ընկնի, միեւնոյն է, չի չարչարուել այնքան, որքան նա:

Ուստի այս ամէնը միտքդ բերելով՝ դադարեցրո՛ւ ամբարտաւանել Աստծու առաջ, իմանալով, որ Աստուած մարդուն չի լքում, երբ թոյլ է տալիս նրա չարչարանքները, այլ Նա կամենում է պսակաւորել նրան եւ աւելի փառաւոր դարձնել: Իսկ եթէ տեսնես, թէ մեղաւորը պատժուում է, յիշի՛ր անդամալոյծին, որ երեսունութ տարուց ի վեր ընկած էր աւազանի մօտ: Ի հաւաստիացումն այն բանի, որ իր մեղքի պատճառով էր հիւանդութիւնը տրուել, լսի՛ր, թէ ի՛նչ է ասում Քրիստոս. «Ահաաւստիկ առողջացար, այլեւս մի՛ մեղանջիր, որպէսզի մի ասելի չարքան չպարտահի քեզ» (Յովհ. 5, 14): Երբ մենք պատժուում ենք, ստանում ենք հատուցում մեր գործած մեղքերի համար, իսկ եթէ ապրում ենք առաքելնի վարքով ու համբերում չարիքներին, ունենում ենք պսակներ վաստակելու առիթներ: Այնպէս որ, թէ՛ արդար ապրենք, թէ՛ մեղքի մէջ, պատժի խրատն օգուտ է մեզ, որովհետեւ այն մեզ կա՛մ աւելի փառաւոր է դարձնում,

կա՛մ ստիպում է լինել առաւել ուշադիր ու մեզ համար թեթեւացնում է ապագայ տանջանքները: Այստեղ պատժուողի եւ պատժին համբերողի ու շնորհակալութեամբ այն կրողի մասին, ով այնտեղ նուազագոյն տանջանքի է ենթարկւում, լսի՛ր, թէ ի՛նչ է ասում սուրբ Պօղոսը. «Դրա համար իսկ ձեր մէջ բազում հիւանդներ եւ ցաւագարներ կան, եւ շարերն էլ մեռած են. որովհետեւ, եթէ մենք մեզ քննէինք, ապա չէինք դատաւարարուի: Իսկ եթէ դատոււմ ենք, Տիրոջից խրատոււմ ենք, որպէսզի աշխարհի հետ չդատաւարարուենք» (Ա Կորնթ. 11, 30-32):

Իմանալով այս ամէնը՝ այսպէս էլ իմաստաւորուե՛նք Աստծու նախախնամութեամբ, իսկ հակաճառողների շուրթերը փակե՛նք: Եւ եթէ մեր բանականութիւնն ընդունակ է հասկանալու որեւէ պատահարի պատճառները, ուրեմն չփորձե՛նք խորհել, թէ Աստծու նախախնամութիւնը չի գործում մեզ համար: Անըմբռնելին վերապահե՛նք Նրա անքննելի գիտութեանը եւ իմաստութեան խորութեանը: Արդարեւ, եթէ սովորական մարդու համար անհնար է նոյնիսկ հասկանալ մարդկային արհեստները, ուրեմն առաւել եւս մարդկային միտքը չի կարող ըմբռնել Աստծու անսահման նախախնամութիւնը, քանի որ «անքննելի են նրա դատաւարանները, եւ անզննելի՝ նրա ճանապարհները» (Հռոմ. 11, 33): Բայց քանի որ քչի մէջ էլ ստացանք պարզորոշ ու ճշմարիտ իմացութիւն այս ամէնի մասին, ուրեմն Աստծուն շնորհակալութիւն յայտնե՛նք այն ամէնի համար, ինչ պատահում է մեզ: Չէ՞ որ նրանց համար, ովքեր ուզում են քննարկել Աստծու նախախնամութիւնը, կայ նաեւ ուրիշ անառարկելի ապացոյց:

Մի հարց ուղղենք հակաճառողին. արդեօք կա՞յ Աստուած: Եթէ նա պատտասխանի «ո՛չ», ուրեմն մենք նրան չպատասխանենք, քանի որ ինչպէս անմիտները, այդպէս էլ բոլոր նրանք, ովքեր ասում են, թէ չկայ Աստուած, արժանի չեն որեւէ պատասխանի: Քանի որ նաւը նուազ նաւորդներով եւ լողորդ-

ներով բարեյաջող չի ընթանում նոյնիսկ մէկ շրջան՝ առանց
 կառավարող ձեռքի, առաւել եւս այսչափ մեծ աշխարհը՝ իր
 մէջ պարունակող զանազան տարերքներից կազմուած այդքան
 բազմաթիւ մարմիններով, չէր կարող գոյատեւել այսքան ժա-
 մանակ, եթէ չլինէր այն կառավարող եւ այս տիեզերքը պահող
 ու պահպանող Աստծու նախախնամութիւնը: Իսկ եթէ նրանք,
 յարգելով հասարակութեան կարծիքն ու փորձը, գիտակցում
 են, որ գոյութիւն ունի Աստուած, ահա թէ ի՛նչ կ'ասենք նրանց:
 Եթէ գոյութիւն ունի Աստուած (ինչպէս իրականութիւնն է),
 ուրեմն Նա նաեւ արդար է, որովհետեւ եթէ Նա անարդար լինի,
 ուրեմն Աստուած չի լինի. իսկ քանի որ արդար է, ապա բոլո-
 րին հատուցում է ըստ արժանիքների: Բայց մենք տեսնում ենք,
 թէ այստեղ ոչ բոլորն են ստանում հատուցում ըստ արժանիք-
 ների: Ուրեմն, հարկ է յուսալ, թէ պատրաստուած է մի ուրիշ
 պարգեւ, որպէսզի այն ժամանակ, երբ իւրաքանչիւրն ստանայ
 հատուցում ըստ արժանիքների, յայտնի լինի Աստծու արդա-
 րադատութիւնը: Եւ այս ապացոյցը մեր միտքն ուղղում է, որ
 խորհենք ոչ միայն Աստծու նախախնամութեան, այլ նաեւ Յա-
 րութեան մասին: Այսպիսով, սա իմանալով՝ մենք էլ խորհենք
 Աստծու նախախնամութեան եւ Յարութեան մասին: Նաեւ ու-
 րիշներին էլ սովորեցնե՛նք ու մշտապէս ջանա՛նք Տիրոջ գէմ մո-
 լեզնողների շուրթերը փակել: Եւ մենք էլ գոհութեամբ փառա-
 բանե՛նք Իրեն ամէն ինչում: Ուստի մենք աւելի՛ ենք արժանա-
 նում Իր հոգածութեանը՝ ստանալով մեծագոյն օգնութիւն: Եւ
 սրա հետ միասին կը կարողանանք ազատուել չարից եւ հասնել
 ապագայ բարիքներին՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհով ու
 մարդասիրութեամբ, որի հետ Հօրը եւ Սուրբ Հոգուն փա՛ռք,
 այժմ, միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:



ԳԷՈՐԳ ՍԱՐԿԱԻԱԳ ԳԷՈՐԳԵԱՆ

**ԸՆԴԴԷՄ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ԳԱՅԹԱԿՂԻՈՒՄ ԵՆ
ԱՄԲԱՐԻՇՏՆԵՐԻ ԲԱՐԵԿԵՑՈՒԹԵԱՆ ԵՒ
ԶԱՅՐԱՆՈՒՄ ԱՐԴԱՐՆԵՐԻ ԴԺԲԱԽՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**

Խմբագրեց և սրբագրեց՝ Ե. Խաչատրեանը

Տպաքանակը՝ 500

Զափսը՝ 60x84 1/16

«Մեկնարկ» ՍՊԸ-ի տպարան

ԵՐԵՒԱՆ - 2021